

## **ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՊԱՅԹԵՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ Գազիկ Տերտերյան**

Էներգակիրների հետ կապված խնդիրներն արդեն վաղուց է, ինչ դարձել են մեծ քաղաքականության բաղադրամաս: Ինչպես հայտնի է, հունվարի 22-ին պայթեցվեցին «Հյուսիսային Կովկաս–Անդրկովկաս», «Մոզդոկ–Թբիլիսի» գազատարները՝ Հյուսիսային Օսիայում եւ բարձրավոլտ էլեկտրահաղորդակցման գծերը՝ Կարաչաեւո-Չերքեզիայում: Գործողությունները կատարվել են գրագետ, ճիշտ էր ընտրված նաեւ իրագործման քաղաքական (ռուսական գազի խնդիրը, սակագների բարձրացման հետեւանքով, դուրս էր եկել միջպետական մակարդակ) եւ ժամանակային (աննախադեպ ծյուն եւ ցածր ջերմաստիճան ողջ կովկասյան տարածքում) պահը: Այս ամենը վկայում է, որ պայթեցումները կատարվել էին լավ մշակված պլանների համաձայն:

Հատկանշական է, որ պայթեցումներից անմիջապես հետո ԱՄՆ Պետդեպարտամենտը հանդես եկավ հայտարարությամբ, որում շեշտվում էր, թե ամերիկյան կողմը տեղեկացված չէ պայթեցման պատճառների մասին եւ չգիտի, թե ովքեր են դրա հեղինակները: Սակայն ԱՄՆ-ը «կոչ է անում ռուսաստանյան իշխանություններին պարզել այդ մանրամասները»: Նշվում էր նաեւ, որ ԱՄՆ-ը հավանություն է տալիս այն փաստին, որ ՀՀ եւ Վրաստանի հարեւանները օգնության ձեռք մեկնեցին վերջիններիս էներգետիկ ճգնաժամի պահին՝ հատուկ նշելով, թե այդ գործընթացին նպաստել է ամերիկյան դիվանագիտությունը: Բնորոշ է, որ Պետդեպարտամենտի ներկայացուցիչն իր հայտարարությունում ակնկալում էր, որ գազատարը 2-3 օրում շուտափույթ կվերանորոգվի ու որ «հայ եւ վրացի ժողովուրդները կարող են հուսալ իրենց երկրների գազամատակարարման վերսկսումը»:

Պետդեպարտամենտի հայտարարությունը եւ, մասնավորապես, հայ ու վրացի ժողովուրդների նկատմամբ այնտեղ արտահայտված հոգատարությունը իրենց նախադեպը չունեն, եւ այդ ամենը կարելի է գնահատել որպես յուրովի ուղերձ՝ ուղղված էներգակիրների հետ կապված գործընթացները լրացուցիչ քաղաքականացնելուն: Պայթյունների համար պատասխանատվությունն անմիջապես դրվեց Ռուսաստանի վրա: Իրենց ակտիվությամբ առանձնապես աչքի ընկան Թբիլիսին եւ Կիեւը, իսկ Լեհաստանն առաջարկեց ստեղծել եվրոպական էներգետիկ անվտանգության համակարգ, այսպես կոչված, «էներգետիկ ՆԱՏՕ», որպեսզի

«դիմակայեն ռուսական գազային հարձակմանը»: Գազի մատակարարման այլ աղբյուրների (մասնավորապես՝ Աֆրիկայից) դիմելու մասին հայտարարեցին նաեւ Եվրոպական մի քանի այլ երկրներ:

Հայկական մի շարք լրատվամիջոցներ նույնպես հակված էին այն տարբերակին, թե վթարները կազմակերպել է Ռուսաստանը: Այս առիթով պետք է նկատել, որ ռուսական գազի սակագների հետ կապված քարոզչական գործառույթները ՀՀ-ում իրագործվում են փոքր-ինչ պարզունակ եղանակներով: Դրանք դժվար թե արդյունավետ լինեն՝ հաշվի առնելով Կրեմլի կողմից ԱՊՀ երկրների նկատմամբ կիրառվող սկզբունքորեն նոր, ավելի կոշտ ռազմավարությունը: Ներկա իրավիճակում պետք է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ Ռուսաստանը որոշակի խնդիր ունի՝ հավասարակշռելու ԼՂՀ խնդրի շուրջ ԱՄՆ-ի կողմից իրագործվող գործընթացները եւ որ ՀՀ-ն ԱՄՆ-ի համար չունի այն ռազմավարական կարեւորությունը, ինչ Ադրբեյջանը: Նման հակառուսական կամպանիան կարող է հանգեցնել նրան, որ ՀՀ քաղաքական ընտրանին հայտնվի մի իրադրության մեջ, երբ Ռուսաստանն արդեն չի հանդիսանում ռազմավարական գործընկեր, իսկ ԱՄՆ-ը դեռեւս չի վերածվել այդպիսինի:

Վերադառնալով գազատարի պայթեցմանը՝ պետք է ամրագրել, որ գազի խնդրի համընդհանուր սրացման պայմաններում նման գործողությունները չէին կարող ձեռնտու լինել Մոսկվային, եւ «ռուսական պատվերի» տարբերակը, թերեւս, բացառվում է: Գազամատակարարման ընդհատումները միայն վարկաբեկում են Ռուսաստանին եւ աշխատում հոգուտ այն վարկածի, թե նա հուսալի գործընկեր չի կարող լինել: Մինչդեռ Կրեմլը իր նոր ռազմավարության հիմքում դրել է էներգակիրների գործոնը եւ երբեմն անգամ կրում է տնտեսական վնասներ (ինչպես դա հաճախ տեղի է ունենում Ուկրաինայով Եվրոպա գազ առաքելիս), միայն թե պահպանի հուսալի մատակարար լինելու իր իմիջը:

Իր հերթին, տրամաբանական է, որ Ռուսաստանի աշխարհատնտեսական այս ռազմավարության դեմ հանդես եկող նրա հիմնական մրցակիցները պետք է որ փորձեն «փչացնել» վերջինիս իմիջը: Այս համատեքստում կասկած չի հարուցում, որ գազատարի պայթեցումներից ամենից շատ շահում են ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները: Նման ահաբեկչական գործողությունները լրացուցիչ «թեքում» են Վրաստանը դեպի Թուրքիայի եւ Ադրբեյջանի էներգակիրների շուկա, ինչը լիովին համապատասխանում է ԱՄՆ ռազմավարությանը (անգամ Իրանի հետ էներգետիկ համագործակցությունն այս համատեքստում ավելի նախընտրելի է):

Նման մոտեցումն է իշխում նաեւ Եվրոպա մատակարարվող գազի նկատմամբ, քանի որ այսօր հենց էներգակիրների մատակարարումների շուրջն են ընթանում Ռուսաստան – Եվրոպա տնտեսական ինտեգրման եւ

քաղաքական համագործակցության գործընթացները: Դա չի կարող ձեռնտու լինել ԱՄՆ ռազմավարությանը, որի հիմնական թեզերից է այլ երկրների միջև ինտեգրացիոն գործընթացների արգելակումը:

Այս ամենի առիթով նկատենք, որ էներգետիկայի շուրջ ընթացող գործընթացները դարձել են միջազգային քաղաքականության ամենահրատապ խնդիրներից մեկը: ԱՄՆ-ում, Եվրոպայում եւ Ռուսաստանում վերջին ժամանակներս ձեւավորվել են բազմաթիվ հետազոտական կենտրոններ (մասնավորապես՝ Ռուսաստանի ԱԳՆ Միջազգային հարաբերությունների ինստիտուտին կից վերջերս հիմնվել է հատուկ «էներգետիկայի միջազգային ինստիտուտ»), որոնք իրենց կառավարությունների եւ խոշոր ընկերությունների պատվերով փորձում են վերլուծել եւ կանխատեսել էներգետիկայի հետ կապված տնտեսական եւ քաղաքական զարգացումները:

Սակայն, բացի աշխարհաքաղաքական տրամաբանությունից, Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած պայթյուններում հյուսիսատլանտյան «հետքի» մասին են վկայում նաեւ այլ փաստեր: Հայտնի է, որ Կովկասում հատուկ օպերատիվ գործողություններ կատարելու ամենալուրջ հնարավորություններն այսօր պատկանում են բրիտանացիներին: Նրանք մուտք են գործել տարածաշրջան դեռեւս ցարական ու խորհրդային տարիներին եւ էպես մեծացրել են իրենց ներկայությունը «պերեստրոյկայի» ժամանակ: Հատկանշական է նաեւ, որ որեւէ փաստացի «ամերիկյան հետք» Հյուսիսային Կովկասում առայսօր չի հայտնաբերվել, մինչդեռ շատ են հիշատակումները բրիտանացիների վերաբերյալ. այսինքն՝ գործի «պատասխանատու» այս տեղամասում կարծես թե «նշանակված» է Մեծ Բրիտանիան, որը հատուկ ծառայությունների գործառույթների ոլորտում ներկայացնում է նաեւ ԱՄՆ շահերը: Հայտնի է նաեւ, որ հաճախ բրիտանական գաղափարների վրա հիմնված քաղաքական կամ հատուկ բնույթի նախաձեռնությունները ֆինանսավորում են ամերիկացիները:

Գաղտնիք չէ, որ «ականազերծման» բնագավառում գործող «Հալլո-Թրաստ» բրիտանական հասարակական կազմակերպությունն իր վրա էր վերցրել չէչեն գրոհայիններին ականապատման տեխնիկային սովորեցնելու գործը: Գաղտնիք չէ նաեւ, որ «Հալլո-Թրաստ»-ը բրիտանական MI6-ի կողմից ստեղծված կազմակերպություն է (հիշենք, որ «Հալլո-Թրաստի» մասնաճյուղը գործել է նաեւ ԼՂՀ-ում եւ ՀՀ-ում): Ըստ մի շարք փորձագետների՝ ՋԼՄ-ում հայտնած կարծիքների, Հյուսիսային Կովկասում կազմակերպված բազմաթիվ ահաբեկչական պայթեցումների «ձեռագիրը» վկայում է, որ դրանց իրագործողները տիրապետում են բրիտանական մասնագետների հնարքներին եւ մեթոդներին: Կա նաեւ տեղեկատվություն այն մասին, որ «Հալլո-Թրաստի» աշխատակիցները ոչ

միայն սովորեցնում են իրենց «աշակերտներին» ականապատման տեխնիկային, այլև հավաքագրում նրանց: Այս ամենը որոշ փորձագետների հիմք է տալիս կարծելու, թե վերջին պայթյունները Յուսիսային Կովկասում իրագործել են բրիտանական ազդեցության տակ գտնվող գրոհայինները, եւ դրա մասին Ռուսաստանի հատուկ ծառայությունները քաջատեղյակ են:

Յուսիսային Կովկասում տեղի ունեցած պայթեցումներում «բրիտանական» հետքի մասին անուղղակիորեն վկայում է նաեւ այդ գործողությունների հաջորդ օրն իսկ Մոսկվայի հեռուստատեսության հատուկ թողարկումը, որտեղ ներկայացվեցին փաստագրական կադրեր Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աշխատակիցների լրտեսական ցանցի գործունեության մասին: Հետեւելով հատուկ ծառայություններում ընդունված ավանդույթներին՝ նման հաղորդումով ՖՍԲ-ն կարծես թե «նշեց» Կովկասում տեղի ունեցած պայթյունների հեղինակներին եւ դրանով «հավասարակշռեց» նրանց գործողությունները:

Փոքր-ինչ շեղվելով «գազային» թեմայից՝ նշենք, որ բացահայտված բրիտանական «դիվանագետները» խորհրդատվական եւ դրամական աջակցություն էին ցուցաբերում իրենց կողմից նախկինում հավաքագրված մոսկովյան մի քանի հասարակական կազմակերպությունների ղեկավարների: Այդ ՀԿ-ների թվում են, ինչպես նշել է ՖՍԲ մամուլ քարտուղարը, «Եվրասիա» հիմնադրամը եւ Հելսինկյան խումբը: ՖՍԲ մամուլ քարտուղարը նաեւ հայտարարել է, թե ռուսաստանյան ՀԿ-ների գերակշռող մասը հրահանգներ է ստանում եւ ֆինանսավորվում արեւմտյան կառույցներից:

Կարող է թվալ, թե մեր տարածաշրջանում էներգակիրների շուրջ ընթացող զարգացումները կրում են մարտավարական-տնտեսական բնույթ եւ առանձնահատուկ ուշադրության արժանի չեն: Սակայն ներկայիս իրողությունը մասն է կազմում գլոբալ բնույթի աշխարհաքաղաքական տեղաշարժերի: Ստեղծված իրավիճակը հիշեցնում է սառը պատերազմի տարիներին ընթացող հակամարտությունը, երբ կողմերն անզիջում պայքարում էին միմյանց դեմ առանց որեւէ խաղի կանոնների: Ակնհայտ է նաեւ, որ ՀՀ-ն եւ նրա հարեւան երկրները, հաճախ իրենց կամքից անկախ, այս կամ այն չափով մասնակից են Երկրորդ սառը պատերազմի գործընթացներին, ինչը լուրջ մարտահրավեր է՝ ուղղված մեր ազգային անվտանգությանը:

## **ԿԱՍՊՅԱՆ ԽԱՉՍԵՐՈՒԿ**

### **Սարգիս Հարությունյան**

Անցած տարվա օգոստոսին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունն այն մասին, թե 2006թ. այդ երկրի ռազմական բյուջեն կազմելու է \$600 մլն, առաջին հերթին դիտարկվեց Արցախյան խնդրի եւ այդ առումով հայ-ադրբեջանական հարաբերությունների ընդհանուր ֆոնի ներքո: Մինչդեռ մեծ է հավանականությունը, որ արդեն այս տասնամյակի վերջին հարեւան Ադրբեջանը որպես իր անվտանգության առաջնային սպառնալիք դիտարկի ոչ թե Հայաստանի ռազմուժը, այլ էներգակիրներով հարուստ (որոնք ուղղակի անփոխարինելի են ադրբեջանական պետության կենսագործունեության համար՝ ի տարբերություն Արցախի) Կասպյան տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները:

#### **Էներգակիրներ**

Ամերիկյան ռազմական վերլուծաբանների հաշվարկով, եթե Իրանի դեմ ռազմական գործողությունների արդյունքում Պարսից ծոցը Հնդկական օվկիանոսին կապող Օրմուզի նեղուցն այսօր փակվի երեք ամսով, ապա Միացյալ Նահանգներին այն կարող է արժենալ համախառն ներքին արդյունքի 4-5% անկում եւ գործազրկության աճ 2%-ով: Ճիշտ է, Իրանի դեպքում նավթի արտահանման (որի առյուծի բաժինը հենց անցնում է Օրմուզի նեղուցով) դադարեցումը կարող է ունենալ տնտեսական ավելի մեծ հետեւանքներ<sup>1</sup>, սակայն խնդիրներ ունեցող ամերիկյան տնտեսության համար կարող է անհաղթահարելի լինել նավթի միջազգային շուկայում սեւ ոսկու մեկ բարելի դիմաց \$100 գինը:

Նախնական հաշվարկների համաձայն, կպահանջվի մոտ \$2 մլրդ՝ Պարսից ծոցում առկա նավթահանքերից դեպի Սաուդյան Արաբիայի՝ Կարմիր ծովի ափ տանող նոր նավթամուղների կառուցման համար, որից հետո, Իրանի դեմ ռազմական գործողությունների սկսման դեպքում, Պարսից ծոցի նավթը մի մեծ մասով կշարունակի հոսել դեպի արեւմտյան

---

1. Իրանական արտահանման մոտ 80%-ը կազմում է նավթը: 2005թ. վերջի տվյալներով՝ Իրանն օրական արդյունահանում էր գրեթե 4 մլն բարել նավթ (1 բարել = 159 լիտր), արտահանում 2.5 մլն բարել: Նավթի վաճառքից ստացված եկամուտները կազմում են իրանական մոտ \$60 միլիարդանոց բյուջեի եկամուտների կեսը:

շուկաներ: Այդ պարագայում, օրինակ, Իրանի նկատմամբ ռազմական գործողությունների արդյունքում Օրմուզի նեղուցի փակվելը (նույն երեք ամսով) Միացյալ Նահանգներին կարող է արժենալ համախառն ներքին արդյունքի ընդամենը 1%-ի անկում եւ գործազրկության չնչին աճ: Հետեւությունն այն է, որ Պարսից ծոցից էներգակիրների տեղափոխման վիճակն ու, հետեւաբար, նավթի միջազգային գները կարող են հանդես գալ որպես Իրանի դեմ ռազմական գործողությունների հավանական սկսման ցուցիչ:

Հաջորդ կարելուր հետեւությունն այն է, որ չպետք է կենտրոնանալ սոսկ Պարսից ծոցից ստացվող նավթի վրա: Այսինքն՝ էներգակիրներով հարուստ այլ կենտրոններից նոր նավթամուղների կամ գազամուղների շահագործումը, որոնք չեն տուժի Իրանի դեմ ռազմական գործողությունների դեպքում, տեսականորեն միայն մեծացնում է իրանական հարցն ուժային ճանապարհով լուծելու հավանականությունը:

Թեեւ հունվարի 31-ին ամերիկյան ազգին ուղղված իր տարեկան ելույթում Բուշ-կրտսերը կարելուրեց «անկայուն տարածաշրջաններից» ներկրվող նավթից ԱՄՆ տնտեսության կախվածության թուլացումը, սակայն գործնականում XXI դար ամերիկյան գլոբալ ռազմավարությունը մուտք է գործել մոլորակի էներգապաշարների նկատմամբ հնարավորինս ավելի մեծ վերահսկողություն սահմանելու օրակարգով. այս իմաստով՝ Կասպյան տարածաշրջանն ու Կենտրոնական Ասիան բացառություն չեն:

Ինչպես հայտնի է, արդեն այս տարի նախատեսվում է շահագործման հանձնել Բաքու – Թբիլիսի – Ջեյհան (ԲԹՋ) 1.767 կմ-ոց նավթամուղը, որը կարող է տարեկան Արեւմուտք տեղափոխել 50 մլն տոննա նավթ: Նավթամուղին Ղազախստանի եւ Թուրքմենստանի<sup>2</sup> միանալու հարցը ներկայումս գտնվում է բանակցությունների բավականին ակտիվ փուլում: Եվ եթե իրականություն դառնան ԲԹՋ նավթամուղին Աստանայի եւ Աշխաբադի միանալու ծրագրերը, ապա Կասպիցի նավթը էներգակիրների միջազգային շուկայում կարող է գրավել շոշափելի տեղ:

---

2. Բրիտանական British Petroleum նավթային ընկերության «Statistical Review of World Energy 2005» հետազոտության համաձայն, 2004թ. վերջի տվյալներով՝ Ադրբեջանն ուներ 7 մլրդ բարել նավթ (ողջ աշխարհի նավթի ապացուցված պաշարների 0.6%-ը), Ղազախստանը՝ 39.6 մլրդ բարել (3.3%), Թուրքմենստանը՝ 0.5 մլրդ բարել (0.04%), իսկ Ուզբեկստանը՝ 0.6 մլրդ բարել (0.05%): Համեմատության համար նշենք, որ նույն աղբյուրի հավաստմամբ, 2004թ. վերջի տվյալներով՝ Ռուսաստանն ուներ 72.3 մլրդ բարել նավթ (ողջ աշխարհի նավթի ապացուցված պաշարների 21.3%-ը): 2005թ. սեպտեմբերին France Press լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռինո Հարնիշը նշում է, թե ըստ ամերիկյան հետազոտությունների, Կասպից ծովի միայն ղազախական ու ադրբեջանական հատվածներում առկա է 37 մլրդ բարել նավթ:

Բացի այդ, գոյություն ունի նաև գազի գործոնը, որը հատկապես այսօր կարելի է համարել ռուս-ուկրաինական գազային ճգնաժամի ֆոնին: 2006թ. նախատեսվում է շահագործման հանձնել նաև Բաքու – Թբիլիսի – Էրզրում (ԲԹԷ) գազամուղը: Այն կարող է տարեկան տեղափոխել 20 մլրդ խորանարդ մետր գազ<sup>3</sup>: Նույն՝ «Statistical Review of World Energy 2005» հետազոտության համաձայն, Ադրբեջանը, Ղազախստանը, Թուրքմենստանն ու Ուզբեկստանը միասին ունեն 9.13 տրիլիոն խորանարդ մետր գազի պաշարներ<sup>4</sup>:

Ինչեւէ, Վաշինգտոնում եզրակացրել են, թե Կասպյան տարածաշրջան – Կենտրոնական Ասիա գիծը չգտնվելով միջազգային համակարգի ուժի կենտրոններից որեւէ մեկի (տվյալ դեպքում՝ Ռուսաստանի կամ Չինաստանի) բացարձակ վերահսկողության ներքո՝ կարող է արդեն տեսանելի ապագայում դառնալ մոլորակի էներգակիրների նկատմամբ վերահսկողություն սահմանելու ամերիկյան գլոբալ ռազմավարության օբյեկտներից մեկը:

### **Աշխարհառազմավարություն**

Ինչ-որ տեղ էներգակիրներին վերաբերող արդյունքները պետք է դասել աշխարհառազմավարական նպատակների շարքին: Եթե ամերիկյան գլոբալ ռազմավարության թիվ մեկ նպատակն է պահպանել ԱՄՆ առաջատար դիրքերն աշխարհում եւ այդ առումով թույլ չտալ մրցակից ուժի ի հայտ գալը, ապա վերահսկողությունը էներգակիրների նկատմամբ այդ նպատակի բաղկացուցիչ մասն է:

Ինդիքը, սակայն, չի սահմանափակվում էներգակիրների նկատմամբ վերահսկողության հաստատմամբ: Ամերիկյան ռազմաքաղաքական ներթափանցումը Կասպյան տարածաշրջան – Կենտրոնական Ասիա հատված ունի աշխարհառազմավարական արդեն վաղուց ակնհայտ դարձած նպատակներ, որոնք հիմնականում ուղղված են այդ հատվածին հարեւան Ռուսաստանի, Չինաստանի եւ Իրանի դեմ:

Ռազմավարական առումով ամերիկյան քաղաքական, տնտեսական ու ռազմական ներկայության հաստատումը Կասպյան տարածաշրջան-Կենտրոնական Ասիա գծում նշանակում է Ռուսաստանին, Չինաստանին

3. Համեմատության համար նշենք, որ վերջերս գործարկված Ռուսաստանից Թուրքիա տանող «Երկնագույն հոսք» գազամուղն ի վիճակի է տարեկան մատակարարել 16 մլրդ խորանարդ մետր գազ:

4. Ըստ նույն աղբյուրի, Սաուդյան Արաբիան, Իրաքը, Քուվեյթը, Օմանը եւ Բահրեյնը միասին ունեն 12.58 տրիլիոն խորանարդ մետր գազի պաշարներ:

Եւ Իրանին կից շրջաններում այնպիսի համակարգերի ստեղծում, որոնք կարող են յուրաքանչյուր պահի խոչընդոտող դեր ստանձնել Մոսկվայի, Պեկինի կամ Թեհրանի նկատմամբ՝ միաժամանակ քայքայիչ գործառնություն իրականացնելով ռուսական, չինական կամ իրանական պետությունների դեմ: Այդ առումով լավագույն օրինակը, թերեւս, սառը պատերազմի ժամանակ Խորհրդային Միության դեմ «Անակոնդա» համակարգի ձեւավորումն էր՝ Եվրոպայից Յեռավոր Արեւելք ընկած երկրների (գրեթե բոլոր այդ երկրներում կային ամերիկյան ռազմակայաններ) շարք, որոնք գտնվելով Վաշինգտոնի ազդեցության ներքո՝ բացասական դիրքորոշում ունեին Մոսկվայի նկատմամբ:

Արդի պայմաններում էական նշանակություն է ձեռք բերում ԱՄՆ հավանական հակառակորդներին հարակից տարածքներում հակահրթիռային պաշտպանության համակարգի տարրերի հիմնումը՝ ռադիոտեղորոշիչ կայաններ, հակահրթիռային հարվածային միջոցներ եւ այլն: Այդ իմաստով Կասպյան տարածաշրջան – Կենտրոնական Ասիա գծի երկրները Պենտագոնում ընկալվում են որպէս հարմար թեկնածուներ: Ըստ ամենայնի, վերջերս Ադրբեջանում ամերիկյան օգնությամբ գործի զգլած ռադիոտեղորոշիչ կայանները պետք է դիտարկել նաեւ այդ համատեքստում:

Ներկայումս Կասպից – Կենտրոնական Ասիա հատվածի վրա ավելի մեծ ազդեցություն է թողնում ԱՄՆ ռազմական գերատեսչության մեկ այլ նախաձեռնություն: Հայտնի է, որ Պենտագոնի ռազմական նոր հայեցակարգերում առաջնային տեղ տրվում է շարժուն զորամիավորումների գաղափարին, որոնք պետք է բավականին կարճ ժամանակահատվածում օդային ճանապարհով նետվեն որեւիցե թեժ կետ եւ լուծեն իրենց առջեւ դրված ռազմական խնդիրը: Մասնավորապէս, այդ գաղափարն է դրված ամերիկյան բանակում վերջերս ստեղծված Stryker հատուկ նշանակության զորաշուկատների հիմքում, որոնք հիմնականում բաղկացած են միջինը 3.5 հազար մարտիկներից եւ իրենց տրամադրության ներքո ունեն մոտ 300 միավոր ռազմական տեխնիկա: Ըստ որոշ տեղեկությունների, ամերիկյան ռազմական գերատեսչությունը նման զորաշուկատներ է տեղակայել Գերմանիայում եւ Իրաքում:

Պենտագոնի շարժուն զորամիավորումների հայեցակարգի մյուս կարեւոր տարրը աշխարհագրական լայն տարածում ունեցող ռազմաօդային ուժերի հենակետերն են: Այդ հենակետերը պետք է ոչ միայն ապահովեն ցանցակենտրոն պատերազմների պայմաններում «առաջին գծին» հնարավորինս մոտ գտնվող ամերիկյան գերազանցապէս մարտավարական օդուժի գործառնությունը, այլեւ պետք է հանդիսանան նաեւ շարժուն զորամիավորումների տեղափոխման համար նախատեսված օդային գլոբալ փոխադրումների բաղկացուցիչ մասերը՝ որպէս



հանգրվաններ: Ինչպես հայտնի, է նման հեռակետեր արդեն իսկ կան Կենտրոնական Ասիայում, նախատեսվում է նրանց ընդլայնում նաև Հարավային Կովկասում:

Այսպիսով, Կասպյան տարածաշրջան–Կենտրոնական Ասիա գծում հաստատվելը Միացյալ Նահանգներին հնարավորություն է ընձեռում աշխարհաքաղաքական ճնշում իրականացնել Հյուսիսային Կովկասի, Ուրալի, Ռուսաստանի արեւմտասիբիրյան ու Չինաստանի արեւմտյան շրջանների, ինչպես նաև Հյուսիսային Իրանի ուղղությամբ: Ընդ որում՝ Ռուսաստանի պարագայում կարող է ստեղծվել աննախադեպ մի իրավիճակ, երբ վտանգի տակ կհայտնվեն այդ երկրի արդյունաբերական առումով ամենազարգացած շրջաններից մեկը՝ Ուրալը եւ ընդհանրապես՝ աշխարհաքաղաքական լարվածության տեսանկյունից անպատրաստ ու փորձ չունեցող արեւմտասիբիրյան շրջանները: Իրանի դեպքում Կասպյան տարածաշրջան–Կենտրոնական Ասիա գծում հաստատվելը ԱՄՆ-ին հնարավորություն է տալիս ավարտին հասցնել իսլամական հանրապետության աշխարհաքաղաքական շրջափակումը:

Հիմնական հետեւությունն այն է, որ Վաշինգտոնը փորձում է գործի գցել Արեւելյան Եվրոպա–Սեւ ծով–Հարավային Կովկաս–Կասպյան ավազան–Կենտրոնական Ասիա աշխարհառազմավարական գիծը, որը պարունակելով ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի եւ շարժուն զորամիավորումների համաշխարհային ցանցի տարրեր՝ հեռակետ է հանդիսանալու Ռուսաստանի (հատկապես Սիբիրի կտրվածքով), Չինաստանի եւ Իրանի ուղղությամբ ամերիկյան հետազա էքսպանսիայի համար: Այդ գիծը նաև լուրջ ներդրում է ունենալու Եվրամիության էներգետիկ անվտանգության ապահովման գործում՝ Վաշինգտոնի պատկերացմամբ, մեխանիկորեն ամրապնդելով անդրատլանտյան փոխկապվածությունը:

## **Օպերատիվ հնարավորություններ**

### Միացյալ Նահանգներ

Եթե ուզբեկական «Քարշի-Խանաբադ» ռազմակայանը 2005թ. նոյեմբերին կորցնելուց հետո Կենտրոնական Ասիայում Պենտագոնը բախվեց սեփական ռազմուժի օպերատիվ հնարավորությունների սահմանափակման հարցին եւ, ըստ որոշ տեղեկությունների, ներկայումս բավականին ակտիվ ջանքեր է թափում տարածաշրջանում նոր հանգրվանների ձեռքբերման ուղղությամբ (Թուրքմենստան), ապա վիճակն այլ է Կասպիցում, ուր ամերիկյան ռազմուժի հաստատման եւ հետագա ընդլայնման թիվ մեկ հանգրվան է ծառայում Ադրբեջանը:

Բաքվի հետ Պենտագոնի ռազմական համագործակցությունը, փաստորեն, բաժանվում է երկու մասի՝ շարժուն զորամիավորումներ եւ Կասպիցում ադրբեջանական ռազմածովային ուժերին ցուցաբերվող օգնություն:

Հիշեցնենք, որ դեռեւս 2003թ. դեկտեմբերից ամերիկյան մասնագետների կողմից սկսվեցին ադրբեջանական օդանավակայանների ուսումնասիրության աշխատանքները՝ ՆԱՏՕ չափանիշներին համապատասխանեցնելու եւ հետագայում ամերիկյան օդուժի կողմից օգտագործվելու նպատակով: Ներկայումս խոսք է գնում Բաքվի մոտ առկա «Բինա», «Նասոսնի» եւ Քյուրդամիրի օդանավակայանների մասին: 2005թ. ընթացքում ամերիկյան մասնագետների կողմից, փաստորեն, ավարտվել են Քյուրդամիրի օդանավակայանի հիմնական կառույցների եւ օդանավակայանին կից հակաօդային պաշտպանության համակարգի արդիականացման աշխատանքները: Ենթադրվում է, որ մոտ ապագայում Քյուրդամիրը կարող է ընդունել ամերիկյան ռազմական ինքնաթիռներ՝ կենտրոնաասիական փոխգործակցության ձեւաչափով:

2005թ. օգոստոսին Միացյալ Նահանգների ռազմական գերատեսչությունը պաշտոնապես հայտարարեց, որ Caspian Guard ծրագրի շրջանակներում գալիք վեց տարիներին Կասպից ծովի անվտանգության ապահովման համար հատկացնելու է \$130 մլն: Ծրագիրը վերաբերում է Ադրբեջանին եւ Ղազախստանին եւ նպատակ ունի երկու երկրների տարածքում հիմնել հրամանատարական-վերահսկողական կետեր՝ ԱՄՆ Ներքին անվտանգության նախարարության կենտրոնների նմանությամբ, օդային եւ ծովային հատուկ գործողությունների իրականացումն ապահովող կառույցներ, ինչպես նաեւ վարժեցնել ադրբեջանական սահմանապահ ծառայության մոտ 400 սպաների:

Ամենակարեւորը՝ Caspian Guard-ի շրջանակներում նախատեսվում է Բաքվի մոտ հիմնել ռազմածովային ուժերի հրամանատարական-վերահսկողական կենտրոն, որն ուղղակիորեն ենթարկվելու է ԱՄՆ ռազմուժի եվրոպական հրամանատարությանը (չտաբը գտնվում է Գերմանիայի Շտուտգարտ քաղաքում) եւ փաստորեն անմիջական վերահսկողություն է իրականացնելու Կասպից ծովի մի զգալի հատվածի նկատմամբ՝ իր աշխատանքները կորդինացնելով Ադրբեջանի Աստարայի (Իրանի սահմանին մոտ) եւ Խիզալի (Ռուսաստանի սահմանին մոտ) շրջաններում արդեն իսկ տեղակայված եւ 2006թ. առնվազն եւս երկու վայրերում բացվող ռադիոտեղորոշիչ կայանների հետ:

Նշենք, որ ավելի վաղ՝ 2000-2003թթ. ընթացքում Միացյալ Նահանգներն Ադրբեջանին էր փոխանցել սահմանային պահպանության երեք մոտորանավակներ:

Ռուսաստան

Ռուսաստանն արդեն իսկ ձեռնամուխ է եղել իր կասպյան նավատորմի արդիականացման, նրա հզորության ավելացման գործին: Եթե Խորհրդային Միության ժամանակ կասպյան նավատորմն ուներ ավելի շատ առափնյա պաշտպանության գործառնություններ (իրանական կողմը երբեք նպատակ չի ունեցել Կասպիցում մարտահրավեր նետել Խորհրդային ռազմածովային ուժերին՝ հասկանալով այդ քայլի անհեռանկարային լինելը) եւ Խորհրդային նավատորմերի շարքում տեխնիկական առումով համարվում էր ամենահետամնացը, ապա վերջին տարիներին Մոսկվայի կողմից ձեռնարկված արդիականացման գործում հատկապես մեծ ուշադրություն է դարձվում ոչ թե ընդհանուր կրակային հզորության մեծացմանը, այլ Ռուսաստանի կասպյան նավատորմի հետախուզական կարողությունների ու ճկունության աստիճանի բարձրացմանը:

Սեփական ռազմածովային ուժերի արդիականացումից եւ ընդհանուր հզորացումից զատ, ռուսական կողմը ձեռնամուխ եղավ նաեւ Կասպյան տարածաշրջանի երկրների հետ երկուստեք, իսկ ավելի ուշ՝ բազմակողմանի ռազմական համագործակցության զարգացմանը: Այդ առումով նախ պետք է առանձնացնել ղազախական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները, որոնք հատկապես ամրապնդվեցին 2005թ. դեկտեմբերին Ղազախստանում կայացած նախագահական ընտրություններից հետո: Ղազախական ռազմածովային ուժերի նավերի մի զգալի մասի կառուցման պատվերն ընդունել է ռուսական ռազմարդյունաբերական համալիրը:

Չունվարի 24-ին Բաքվում Իլհամ Ալիևի հետ կայացած հանդիպման ժամանակ Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը ադրբեջանական կողմին պաշտոնապես առաջարկեց անդամակցել Կասպիցում Մոսկվայի կողմից ստեղծվող ռազմաքաղաքական կառույցին («Կասֆոր»), որը պետք է բաղկացած լինի կասպյան ավազանի հինգ երկրներից եւ որի առնչությամբ արդեն իրենց համաձայնությունն են հայտնել Ղազախստանն ու Իրանը: Թեեւ ներկա դրությամբ ադրբեջանական կողմը, ըստ էության, մերժել է Մոսկվայի առաջարկությունը, սակայն բանակցությունները շարունակվում են:

Այլ երկրներ

Կասպիցում սեփական ռազմածովային ուժերն է զարգացնում նաեւ Իրանը: Երկրի Գլխավոր սպայակույտը որոշում էր կայացրել կասպյան ուղղությամբ ծովային ոստիկանության ստեղծման վերաբերյալ, ինչն արեւմտյան եւ ադրբեջանական կողմերն անմիջապես որակեցին իբրեւ հետախուզական-դիվերսիոն ջոկատներ:

Եվ վերջապես, բավականին արագ տեմպերով իր ռազմածովային ուժերն է զարգացնում նաև Թուրքմենստանը, որը մի շարք նավթահանքերի պատճառով Ադրբեջանի հետ գտնվելով հակամարտության մեջ՝ խնդիր է դրել սեփական ուժերով ապահովել իր իսկ տնտեսական շահերը: Հայտնի է, որ գազի դիմաց Ուկրաինան \$500 մլն արժողությամբ ռազմական ծառայություններ եւ զինտեխնիկա է վաճառելու Թուրքմենստանին:

### **Ընդհանրացումներ**

Կասպյան տարածաշրջանում բավականին արագ տեմպերով ընթանում է ռազմականացման գործընթաց, որն իր ծավալներով կարող է որոշ ժամանակ անց գերազանցել Հարավային Կովկասում ընթացող նմանատիպ գործընթացին:

Ի տարբերություն Հարավային Կովկասի, Կասպիցի ռազմականացմանն անմիջականորեն մասնակցում են անհամեմատ ավելի հզոր երկրներ՝ Ռուսաստան, Իրան, Միացյալ Նահանգներ, Ղազախստան, ինչն էլ, իր հերթին, մեծացնում է ավազանում ընթացող աշխարհաքաղաքական շարժերի նշանակությունը:

Արդեն այսօր Կասպիցում նկատվում է շղթայական ռեակցիային բնորոշ մի իրավիճակ: ԱՄՆ ներթափանցումից մտահոգ Ռուսաստանի ու Իրանի քայլերը՝ ուղղված սեփական ռազմածովային ուժերի կարողությունների ավելացմանը, իրենց ազդեցությունն են թողնում ավազանի մյուս երկրների ռազմական հայեցակարգերի վրա: Օրինակ, այդ առումով Կասպից ծովում սեփական ռազմածովային ուժերը հզորացնելու Աշխաբադի մտահոգությունն արդեն պայմանավորված չէ սոսկ Բաքվի հետ ունեցած խնդիրներով, այլ արտացոլում է կասպյան ավազանում ընթացող ռազմականացման ընդհանուր գործընթացի նկատմամբ թուրքմենական վերնախավի դիրքորոշումը:

Նման պայմաններում, երբ առաջիկա ժամանակահատվածի ընդհանուր միտումները մեծացնելու են Կասպիցում առկա լարվածությունը, մերձկասպյան որոշ երկրների (Ղազախստան, Թուրքմենստան ու Ադրբեջան) կողմից իրավիճակը կարող է դիտարկվել որպես սեփական անվտանգությանը սպառնացող *առաջնային* մարտահրավեր:

**ԿԻՊՐՈՍԻ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱ – ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ  
ՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
Արտակ Շաքարյան**

Կիպրոսի խնդիրն ամենալուրջ արգելքներից է Թուրքիայի՝ Եվրամիությանը լիիրավ անդամակցելու գործընթացում. գործընթաց, որին իր աջակցությունն է հայտնում Թուրքիայի բնակչության մոտ երեք քառորդը:

Կիպրոսի վերոհիշյալ խնդիրն սկսվեց 1974թ., երբ կղզու հյուսիսային մասը զավթվեց թուրքական բանակի կողմից: 1983թ. թուրքերն այդ տարածքում հիմնեցին, այսպես կոչված, «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն», ինչն ավելի ամրապնդեց բաժանումը: Վերջինս պաշտոնապես ճանաչված է միայն Անկարայի կողմից, մինչդեռ կղզու հարավային մասում գտնվող Կիպրոսի Հանրապետությունը ոչ միայն ճանաչվեց, Թուրքիայից բացի՝ աշխարհի մնացած բոլոր երկրների կողմից, այլև 2004թ. մայիսին դարձավ Եվրամիության անդամ:

Ավելի քան 30 տարի Կիպրոսի խնդիրը Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում գրավում է առաջին տեղը: Անկարայի մեծագույն խնդիրներից է Հյուսիսային Կիպրոսի միջազգային ճանաչումը, սակայն դա չի արվում նույնիսկ «եղբայրական հանրապետություն» Ադրբեջանի կողմից: Վերջինս բավարարվեց միայն դեպի կղզու թուրքական մաս ուղիղ չվերթ բացելով, ինչի արդյունքում, մասնավորապես, առժամանակ կասեցվեց Եվրամիության «Նոր հարեւաններ» քաղաքականության շրջանակում՝ Ադրբեջանի հետ գործողության ծրագրի քննարկումը:

Անկարային կիպրական խնդրում մեծ աջակցություն է ցուցաբերում Վաշինգտոնը՝ նույնիսկ իրաքյան երկրորդ պատերազմի ընթացքում փոքր-ինչ սառած թուրք-ամերիկյան հարաբերությունների պայմաններում: Սա, թերեւս, բխում է ընդհանուր առմամբ Կիպրոս կղզու ռազմավարական մեծ նշանակությունից: Կիպրոսը կարելու է ԱՄՆ-ի համար Մերձավոր Արեւելքի երկրների ու ընդհանրապես Միջերկրական ծովի արեւելյան մասի հանդեպ իր ունեցած գերակա դիրքի շնորհիվ: ԱՄՆ-ին ձեռնտու է կղզու երկատված մնալը՝ հունական ու թուրքական մասերի, քանի որ մեծանում է Կիպրոսի խնդրում ներգրավված մասնակիցների կառավարելիության աստիճանը: Հունական մասը, դառնալով ԵՄ լիիրավ անդամ, զրեթե ամբողջապես մտավ Եվրոպական ազդեցության գոտի, ինչը չես ասի կղզու թուրքական մասի վերաբերյալ:

Սառը պատերազմի ժամանակաշրջանում Վաշինգտոնը կղզում թուրքական զորքերի գտնվելը դիտում էր որպես Խորհրդային Միության ու նրա դաշնակիցների վրա ազդեցության հավելյալ լծակ: Սրանով էր բացատրվում այս խնդրում ԱՄՆ աջակցությունը Թուրքիային:

Սակայն հետխորհրդային ժամանակաշրջանում իրավիճակն արմատապես փոխվեց: Թուրքիան կորցրեց իր նշանակությունը որպես ՆԱՏՕ առաջին գիծ հակախորհրդային ճակատում: Նույնը որոշ առումով վերաբերվեց նաև Կիպրոսին:

Թուրքիայի ու Կիպրոսի աշխարհառազմավարական դիրքերը կրկին կարելի էր վերանայնացնել հակահարձակական պատերազմի շրջանակներում, երբ ուշադրությունը կենտրոնացվեց Մերձավոր Արևելքի վրա: Բացի այդ, Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նավթամուղի շինարարությունն ու գործարկումն ավելացրին Կիպրոսի ու հատկապես նրա հյուսիսային մասի նշանակությունը՝ այս անգամ որպես նավթային պաշարների տեղափոխման ուղիների անվտանգության ապահովման համակարգում կարելի էր տարրերից մեկը:

Հունաստանն այս ընթացքում ամենեւին անգործ չէր: Դեռ 1995թ., երբ Թուրքիան դիմեց ԵՄ Մաքսային միությանն անդամակցության համար, Հունաստանը կարող էր օգտվել վետոյի իր իրավունքից ու արգելակել Անկարայի առաջխաղացումը, սակայն Աթենքը դա չարեց՝ փոխարենն ստանալով ԵՄ անդամների համաձայնությունը Կիպրոսի Հանրապետության հետ ԵՄ լիիրավ անդամակցության գործընթաց սկսելու վերաբերյալ: Սա բերեց նրան, որ Կիպրոսի հունական մասը մտավ այն երկրների շարքը, որոնք 2004թ. մայիսին դառնալու էին ԵՄ լիիրավ անդամ: Այսպիսով, Կիպրոսի Հանրապետությունն առաջ անցավ Թուրքիայից ու, ի հավելումն Հունաստանի, Եվրամիությունում այլևս տեսականորեն կարող էր արգելակել Անկարային վերաբերող յուրաքանչյուր խնդիր:

Իրավիճակը փոքր-ինչ մեղմելու համար Թուրքիան անցավ դիվանագիտական հակահարձակման: ԱՄՆ գործունե աջակցությամբ 2002թ. ՄԱԿ գլխավոր քարտուղար Քոֆի Անանի կողմից միջազգային հանրությանը ներկայացվեց Կիպրոսի խնդրի հանգուցալուծման մի ծրագիր: Թե՛ հունական, թե՛ թուրքական կողմերի վրա ճնշումներից ու երկարատեւ բանակցություններից հետո որոշում կայացվեց 2004թ. ապրիլի 24-ին՝ Կիպրոսի ԵՄ լիիրավ անդամակցության օրվանից մեկ շաբաթ առաջ, անցկացնել հանրաքվե կղզու երկու մասերում:

Հունական կողմին, ըստ էության, Անանի ծրագիրը ոչ մի բան չէր տալիս: Մեկ շաբաթ անց իրենք դառնում էին ԵՄ լիիրավ անդամ եւ ընդ որում՝ կղզին ամբողջությամբ համարվում էր Կիպրոսի Հանրապետու-

թյան տարածք: Այս դեպքում կղզու հյուսիսային մասում գտնվող թուրքական զորքերը համարվելու էին «Եվրամիության տարածքը զավթած ուժեր»: Բացի այդ, Անանի ծրագիրը նախատեսում էր կղզու երկատում հունական ու թուրքական մասերի՝ երկու իրավահավասար պետությունների, որոնք ձեւականորեն միավորված էին լինելու մեկ ընդհանուր դաշնության հովանու ներքո: Ակնհայտորեն ծրագիրը ձեռնտու էր թուրքական կողմին: Ուստի, զարմանալի չէր, որ հանրաքվեի արդյունքում հունական կողմը ձայների մեծամասնությամբ մերժեց ՄԱԿ գլխավոր քարտուղարի ծրագիրը, իսկ թուրքական կողմը՝ ընդունեց: Սա կարելի է համարել Անկարայի դիվանագիտական հաղթանակը, քանի որ երկար տարիների ընթացքում առաջին անգամ թուրքական կողմն արտաքուստ հանդես եկավ որպես Կիպրոսի խնդրի խաղաղ լուծման կողմնակից, իսկ հունական կողմը՝ անհաշտ: Դե-յուրե ողջ կղզին, իսկ փաստացի՝ կղզու միայն հունական մասը դարձավ ԵՄ լիիրավ անդամ:

\* \* \*

Անկասկած, Անկարան չէր կարող հեշտությամբ մարսել Կիպրոսի ԵՄ լիիրավ անդամակցությունը: Թուրքիայի ամեն մի նշանակալի քայլի ժամանակ խնդրի չլուծված լինելն իրեն հիշեցնել է տալիս: Արդեն 2004թ. դեկտեմբերի 17-ին Բրյուսելի գազաթափոցում Կիպրոսը պահանջեց, որ Թուրքիան ճանաչի իր ինքնիշխանությունը: Թուրքիան, հանդիսանալով ԵՄ Մաքսային միության անդամ, պետք է ստորագրեր նոր անդամների հետ հավելյալ արձանագրություն, ինչը նշանակում էր կղզու հունական մասի փաստական ճանաչում: Երկարատեւ բանակցություններից հետո Անկարան հասավ պայմանավորվածության, որ իր ստորագրությունը չի նշանակի փաստացի ճանաչում: Հարցն առժամանակ հետաձգվեց:

2005թ. հոկտեմբերի 3-ին սկսվեցին Թուրքիայի հետ ԵՄ լիիրավ անդամակցության բանակցությունները: Կիպրոսն այս անգամ չօգտագործեց վետոյի իր իրավունքը՝ իրավացիորեն համոզված լինելով, որ նախ՝ դա կարող է անել հետագայում, ապա՝ որ Թուրքիայի վրա ավելի հեշտությամբ կարելի կլինի ճնշումներ գործադրել, երբ նա արդեն մտած լինի բանակցային փուլ, այսինքն՝ երբ կորցնելու բան կունենա:

Ինչպես եւ կանխատեսվում էր, Կիպրոսի ճանաչման խնդիրը կրկին սրվեց 2006թ. հունվար ամսին՝ «Ապրանքների ազատ տեղափոխման» վերաբերյալ թուրք-եվրոպական բանակցությունների ժամանակ, քանի որ մինչեւ այժմ Թուրքիայի նավահանգիստները փակ են Կիպրոսի հույների առջեւ, ինչն անընդունելի է:

Թուրքիան հենց հունվար ամսին անցավ դիվանագիտական

հարձակման: Թուրքիայի համար շատ կարեւոր է ստեղծել հարցի շուտափույթ լուծման կողմնակցի պատկեր, որպեսզի ճնշումները թեթեւանան: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ա.Գյուլը հունվարի 20-ին ՄԱԿ գլխավոր քարտուղար Քոֆի Անանին ներկայացրեց խնդրի լուծման մի ծրագիր, որտեղ նույնիսկ կան գործողությունների իրականացման ամսաթվեր: Անկարայի առաջարկն իր մեջ ավելի շատ փոխզիջման պահանջ է ներկայացնում՝ Թուրքիան պատրաստ է բացել իր նավահանգիստները Կիպրոսի հույների առջեւ, միայն եթե վերացվի «Չյուսիսային Կիպրոսի» շրջափակումը:

Թուրքական առաջարկը ոչ մի նորություն չի պարունակում: Հարավային Կիպրոսի արտաքին գործերի նախարար Յորգո Յակովուն այն անվանել է «հին ուտեստ, որը տաքացրել են»: Իրոք, սա 2005թ. մայիսի 30-ին ներկայացված գործողությունների ծրագրի փոքր-ինչ հստակեցված տարբերակն է:

Հիմնականում այս քայլի նպատակը ժամանակ շահելն էր, ինչին եւ Անկարան հաջողությամբ հասավ: Ինչո՞ւ է պետք Թուրքիային այս մի քանի ամիս ժամանակը, որ նա շահեց: Գարնանը սպասվում է եվրամիության զեկույցը Թուրքիայի հետ ներկա բանակցությունների ընթացքի վերաբերյալ: Եթե Կիպրոսի հարցում այս քայլը չարվեր, ապա զեկույցում այս կետը մեծապես կվնասեր Անկարային, իսկ այժմ Թուրքիան խուսանավելու տեղ ունի, մատնանշելով հարցի՝ ՄԱԿ-ում գտնվելը: Բացի այդ, Թուրքիայի նպատակն է Կիպրոսի հարցը ԵՄ իրավասության շրջանակից հանել ու տեղափոխել ՄԱԿ լիազորությունների դաշտ, որտեղ Կիպրոսը փոքր-ինչ կդադարի Թուրքիայի լիիրավ անդամակցության ուղու վրա արգելք լինելուց, ինչպես նաեւ ՄԱԿ-ում կզգացվի Թուրքիայի հանդեպ ԱՄՆ բացահայտ աջակցության ազդեցությունը:

ԱՄՆ աջակցության մասին է խոսում 2005թ. հոկտեմբեր ամսին «Չյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» նախագահ Թալաթի պաշտոնական այցը ԱՄՆ, որտեղ նրան ընդունեց ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը: Ի դեպ, վերջինս, 2006թ. փետրվար ամսին այցելելու է Անկարա, եւ օրակարգում Կիպրոսի հարցը տեղ է գրավում կարեւորագույն նշանակության խնդիրների ցանկում: Ակնհայտ է ամերիկյան ու անգլիական բացահայտ աջակցությունը Անկարայի այս ծրագրին: Բավական է միայն հիշատակել ավանդապես խնդրի կարգավորման գործում մեծ դեր ունեցող Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ջեք Սթրոուի այցը կղզի, որտեղ նա նախ հանդիպում ունեցավ «Չյուսիսային Կիպրոսի» նախագահի հետ, հայտնեց իր միանշանակ աջակցությունը Անկարայի նոր նախաձեռ-



նությանը, ինչից հետո նրան հրաժարվեց ընդունել Հարավային Կիպրոսի նախագահ Պապադոպուլոսը:

\* \* \*

Ընդհանուր առմամբ, կարելի է պնդել, որ թուրք-եվրոպական հարաբերություններում Կիպրոսի հարցը լինելու է այն ականը, որ պայթելու է Անկարայի սխալ քայլերի դեպքում: Այս առումով, Թուրքիան կփորձի առավելագույնս զգոն լինել Հունաստանի ու Կիպրոսի Հանրապետության ձեռնարկումների հանդեպ: Ակնհայտ է, որ Անկարան ձգտելու է որքան հնարավոր է ձգձգել Կիպրոսի հարցի համապարփակ լուծումը, սակայն նաեւ, ամենայն հավանականությամբ, գնալու է զիջումների որոշ հարցերում, որոնք, թերեւս, այդքան էլ սկզբունքային չեն լինի:

Պետք է նաեւ հիշել, որ Կիպրոսի խնդրում յուրաքանչյուր շարժ շատ սուր է ընդունվում Թուրքիայի ներքաղաքական դաշտում, իսկ Անկարան արդեն սկսել է պատրաստվել խորհրդարանական ընտրությունների:

## **ԵՎՐՈՊԱ. ԱՊԱԳԱՅԻ ՄՑԵՆԱՐՆԵՐ**

### **Սուրեն Սարյան**

Այսօր արդեն շատերն են նշում, որ Եվրոպական Միությունը բախվել է իր պատմության մեջ ամենախոր ճգնաժամի հետ եւ նրա ապագան այլեւս անորոշ է:

Ֆրանսիայում եւ Նիդեռլանդներում կայացած հանրաքվեներում Սահմանադրական համաձայնագրի տապալումից, ԵՄ բյուջեի շուրջ անարդյունք բանակցություններից, Գերմանիայում կառավարական ճգնաժամից, Ֆրանսիայում փողոցային անկարգություններից հետո Եվրոպան վերցրել է «խորհելու դադար»՝ իր հետագա ճակատագիրը որոշելու հարցերի հետ:

Ճգնաժամը նախեստաճ ցույց տվեց, թե ինչքան խորն է Եվրոպական էլիտաների եւ Եվրոպական հասարակության միջեւ անջրպետը: Ինչպես նշեց Լյուքսեմբուրգի վարչապետ Ժան-Կլոդ Յունկերը, «մենք, որ առաջնորդում ենք Եվրոպան, կորցրել ենք Եվրոպացիներին իրենցով հպարտացնելու մեր ուժը»:

Ավելին, մենք ականատես դարձանք ԵՄ երկու հենասյունային պետությունների՝ Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի բախմանը Միության բյուջեի խնդրի շուրջ: Երբ նախագահ Շիրակը մեղադրում էր վարչապետ Բլերին՝ «ազգային եսասիրության» եւ «անբավարար Եվրոպականության» մեջ, վերջինս, իր հերթին, հայտարարում էր, թե «Եվրոպան որեւէ մեկի կողմից սեփականացված չէ»:

Այս բախումն, ըստ էության, արտացոլում էր ԵՄ ստեղծման օրվանից մինչեւ օրս տեւող պայքարը մայրցամաքի երկու՝ պայմանականորեն անգլոսաքսոնական կամ բրիտանական եւ ֆրանսիական կամ ֆրանկո-գերմանական մոդելների միջեւ:

Անգլոսաքսոնական մոդելն առաջ է քաշում ազատ առևտրի եւ շուկայի գաղափարը՝ թույլ քաղաքական ինստիտուտներով, մինչդեռ ֆրանկո-գերմանական մոդելը հանդես է գալիս ուժեղ պետական կառույցների եւ նրանց կողմից Եվրոպական տնտեսության կարգավորման օգտին: Սակայն սրանք զուտ կլիշեներ են, որոնք իրական էին տասը-քսան տարի առաջ:

Ներկա պահին, հատկապես մայիսյան «ոչ»-ից հետո, Ֆրանսիան հանդես է գալիս սոցիալական մոդելի օգտին եւ վերապահումով է մոտենում ԵՄ հետագա ընդլայնմանը: Մինչդեռ բրիտանական թեզը հենց այն է, որ ԵՄ-ը դարձել է ավելի նվազ չափով ժողովրդականություն վայելող հենց

Ֆրանսիայի եւ Գերմանիայի կառավարությունների սոցիալական քաղաքականության հետեւանքով: Եվրոպական տնտեսությունը կարիք է զգում բարեփոխումների, իսկ ընդլայնման բանակցությունները պետք է շարունակվեն՝ գուցե ավելի երկարաժամկետ հեռանկարի հիման վրա: Այժմ Եվրոպայի առաջնահերթությունը պետք է լինեն տնտեսական վերակառուցումը եւ վստահության վերականգնումը:

Տարբեր են նաեւ երկու մոտեցումների աշխարհաքաղաքական պատկերները: Ֆրանսիայի առաջնորդները, սկսած դը Գոլից մինչեւ Շիրակ, մշտապես ունեին մի տեսլական, այն է՝ Փարիզի կողմից առաջնորդվող միասնական քաղաքական Եվրոպա, Գերմանիան՝ որպես իր հիմնական դաշնակից, Ռուսաստանը՝ որպես Եվրոպայի ռազմավարական գործընկեր՝ ամերիկյան գերտերությանը եւ բարձրացող չինական հսկային հակակշռող:

Լոնդոնի տեսլականն այլ է. միայն ԱՄՆ-ի հետ միասնական Եվրոպան կարող է իր վճռորոշ ազդեցությունը տարածել աշխարհի այլ տարածաշրջաններում: Անգլոսաքսոնական տեսությունը դիտարկում է Եվրոպան որպես մեծ մի փորձարկում, որը պետք է առաջ գնա զգուշորեն, բայց զնա՝ ապահովելով անվտանգություն, բարօրություն եւ երաշխավորված ապագա Եվրոպայի բնակիչների համար:

Այսինքն՝ երկու մոդելներն էլ նախատեսում են կառուցել «հզոր եւ միասնական Եվրոպա»: Միայն թե նրանց ջատագովները տարբեր կերպ են ընկալում այդ հզորացումը եւ միությունը: Մեկը համարում է, որ պետք է կենտրոնացված, ինստիտուցիոնալացված Եվրոպա, մյուսը՝ որ Եվրոպայի ուժը հենց նրա ինստիտուտների թուլության, ոչ պարտադիր բնույթի եւ ամորֆության մեջ է: Այդ ամորֆությունն էլ Եվրոպայի ընդլայնման որեւէ սահման չի դնում եւ թույլ կտա այն շարունակել մինչեւ իրական Եվրոպական սահմաններն ու Եվրոպական նոր ինքնության ձեւավորումը:

Երկրորդ աշխարհամարտից հետո Մեծ Բրիտանիան՝ միակ Եվրոպական երկիրը, որը պարտություն չէր կրել եւ զրավված չէր եղել պատերազմի ընթացքում, բաց թողեց պատմական մի հնարավորություն՝ դառնալ Եվրոպայի վերականգնման եւ միավորման հենասյունն ու առաջատարը: Ֆրանսիան, շնորհիվ վարչապետ ժան Մոնեի ոգեշնչման, իր վրա վերցրեց այդ առաքելությունը: Այսօր Լոնդոնում կարծես թե սկսում են հասկանալ, թե ինչից զրկվեց Մեծ Բրիտանիան եւ դեռ երկար կզրկվի, եթե չչտկի իրերի ընթացքը: Այժմյան քաղաքական զարգացումները մայրցամաքում ցույց են տալիս, որ ուժերի հարաբերակցությունը փոխվում է դեպի բրիտանական ուղղությունը: «Ֆրանսիական» կամ «դրզոլական» Եվրոպան այլեւս չկա: ԵՄ-ը չի դառնալու Եվրոպայի Միացյալ Նահանգներ, ինչի հնարավորությունն առկա էր, երբ դրվեց Եվրոպական Սահմանադրության հարցը: Գերմանիան, Անգելա Մերկելի

կառավարության օրոք, այլևս չի հակադրվելու Վաշինգտոնին, այլ ձգտելու է սերտ համագործակցության ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի հետ: Պատահական չէ, որ հենց Գերմանիայի նոր կանցլերի միջնորդությամբ ֆրանկո-բրիտանական վեճը ԵՄ բյուջեի շուրջ հարթվեց: Իսկ հաջորդ նախագահական ընտրություններում Նիկոլա Սարկոզիի հաղթանակի դեպքում հնարավոր կլինի խոսել Եվրատլանտյան առանցքին Փարիզի վերադառնալու մասին:

Թեեւ Մեծ Բրիտանիան վայելում է ԵՄ անդամների, հատկապես նոր անդամների մեծամասնության աջակցությունը, սակայն պետք է նկատի ունենալ, որ նա սերտորեն կապված է Ֆրանսիայի եւ Գերմանիայի հետ տնտեսական կապերով, ուստի չի կարող հաշվի չնստել Փարիզի եւ Բեռլինի դիրքորոշումների հետ, ինչպես եւ վերջիններս չեն կարող արհամարհել Լոնդոնին իրենց եվրոպական քաղաքականության մեջ: Գումարած այն պարագան, որ բրիտանական քաղաքական վերնախավում արդեն բավականին ուժեղ դիրքեր ունի, այսպես կոչված, «եվրոպական» թելը, որը կապում է Մեծ Բրիտանիայի ապագան հենց ԵՄ զարգացման հետ եւ շահագրգռված է ԵՄ ուժեղացումով:

Իր հերթին, նոր (ինչպես եւ ապագա) գերմանական կառավարությունը փորձելու է հավասարակշռել Ռուսաստանի հետ կապերը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների հետ հարաբերություններով՝ շարունակելով վերջիններիս ինտեգրումը Եվրոպային: Որպես այդ համագործակցության հիմք ծառայելու է էներգետիկան, որի կարելիությունը Եվրոպայի տնտեսության եւ անվտանգության համար էապես աճում է: Յենց էներգետիկ քաղաքականությունը, գերմանական ծրագրով, կարող է հանգեցնել համաեվրոպական միասնության: Ասել է թե՛ Գերմանիան կվերցնի իր վրա Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների՝ Ռուսաստանի հետ հաշտեցման գործը. առհասարակ, եվրոպական մտածելակերպը ելնում է ոչ թե «կամ-կամ», այլ «եւ-եւ» սկզբունքից:

Վերջին հաշվով, Եվրոպան էլ, Ռուսաստանն էլ բախվում են բնակչության նվազման կամ ծերացման եւ մահմեդականների ու ասիացիների տարածման խնդիրների հետ: Երկուսն էլ միայն փորձում են ժամանակ շահել:

Արդյունքում ստացվում է, որ եթե Մեծ Բրիտանիան իր վրա է վերցնում Եվրոպայի արտաքին ընդլայնման առաքելությունը, ապա Գերմանիան տանելու է Եվրոպայի ներքին ամրապնդման առաքելությունը: Այս դեպքում Լոնդոնն ու Բեռլինը փոխլրացնելու են իրար:

Իսկ եվրոպական ինտեգրման ընդլայնման եւ խորացման ուղղությունները մշտապես փոխկապակցված են եղել: Որոշ երկրներ, օրինակ՝ Ֆրանսիան եւ Ավստրիան, հաջորդ տարի Բուլղարիան եւ Ռումինիան Միությանը միացնելուց հետո պատրաստ են արգելք դնել ԵՄ հետագա

ընդարձակման վրա: Հատկապես այս արգելքի կիրառման հավանականությունը շատ է քննարկվում Թուրքիայի պարագայում: Ավելի հեռավոր ապագայում (մոտավորապես 2012-2015թթ.) սպասվում է միայն Խորվաթիայի, Սերբիայի, Մոնթենեգրոյի, Մակեդոնիայի, Բոսնիայի եւ Ալբանիայի մուտքը ԵՄ, որոնք արդեն ճանաչվում են որպես անդամության թեկնածուներ: Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի, Վրաստանի եւ Հայաստանի՝ ԵՄ-ին միանալու շանսերը ներկա պահին եւ տեսանելի ապագայում համարվում են չնչին:

Արեւմտաեվրոպական հանրությունը համարում է, որ ԵՄ հետագա ընդլայնումը վտանգի կենթարկի հենց իրեն՝ Միությանը: Որոշ փորձագետներ խոսում են անգամ ազգայնականության նոր ալիքի մասին, որը համակել է Եվրոպան եւ որը դիմադրում է ԵՄ հետագա ընդարձակմանն ու ուժեղացմանը: Ֆրանսիացիները, հոլանդացիները, բրիտանացիները կամ դանիացիները մտահոգված են իրենց ազգային ինքնության եւ քաղաքական ինքնուրույնության ենթարկեցմամբ Բրյուսելի վերազգային բյուրոկրատիային: Թեպետ նման պատկերացումը մի փոքր ուռճացված է (որեւէ անդամ պետություն չէր կորցնում իր ինքնիշխանությունն անգամ նոր եվրոպական Սահմանադրության ընդունման դեպքում), սակայն Եվրոպայում որոշ ուժեր օգտագործում են այս մտահոգությունները, եւ այսօր շրջանառության մեջ են «մենք ուզում ենք մնալ Մեծ Ֆրանսիա», կամ «մենք ուզում ենք մնալ հոլանդացի», կամ «մենք չենք ցանկանում զիջել մեր աշխատատեղերը լեհ փականագործին» կարգախոսները (չնայած, միեւնույն է, այդ աշխատատեղերը զիջվում են, սակայն ոչ թե լեհերին, այլ արաբներին կամ աֆրիկացիներին):

Ընդլայնման սցենարի կասեցման դեպքում մենք գործ կունենանք պոտենցիալ շերտավորման հետ: Բոլոր այն երկրները, որոնք դուրս կմնան Միությունից, կդառնան ոչ եվրոպական ուժերի համար հեշտ մի ավար, կամ էլ նորից կընկղմվեն ներքին բախումների անվերջության մեջ: «Եվրոպական հարեւանություն» քաղաքականությունը, որն առաջարկվում է կիրառել անդամության բացակայության փոխարեն, սփոփանք չէ: Եվրոպայում շատ քաղաքագետներ եւ փորձագետներ գտնում են, որ այդ քաղաքականությունն անիմաստ է, քանի որ Միությունից պահանջելու է լրացուցիչ ծախսեր եւ ուժերի վատնում, որոնք առանց անդամության հստակ հեռանկարի պարզապես կմսխվեն եւ արդյունք չեն տա:

Հենց ԵՄ անդամակցության հեռանկարն է ծառայում որպես արդիականացման կամ եվրոպականացման կողմնորոշիչ Թուրքիայի, Ուկրաինայի, Վրաստանի կամ Հայաստանի նման երկրների համար: Այս երկրները ցանկանում են վերջնականապես որոշել իրենց տեղը՝ ձգտելով չհայտնվել Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ միջանկյալ մի գոտում՝ ապագայում նրանց ձեռքում որպես մանրադրամ չդառնալու համար, ինչպես դա անցյալում է

եղել: Բնականաբար, անդամության հասնելու համար նրանք պետք է անցնեն երկար ճանապարհ՝ կատարելով անդամության համար անհրաժեշտ պայմանները եւ համապատասխանելով չափանիշներին, որոնք շրջանցել չի ստացվի:

Այդուհանդերձ, անգլիական մոդելը եւ նրա ջատագովները՝ ի դեմս Մեծ Բրիտանիայի եւ, այսպես կոչված, «նոր Եվրոպայի» երկրների, որոնք վերջերս են միացել ՆԱՏՕ-ին եւ ԵՄ-ին, հանդես են գալիս ընդլայնումը շարունակելու օգտին՝ գտնելով, որ Միությունը պետք է ծածկի ամբողջ մայրցամաքը՝ հանուն սեփական տնտեսական, ժողովրդագրական եւ աշխարհաքաղաքական շահերի: Բրիտանացի քաղաքագետ Ռոբերտ Կուպերի խոսքերով, «ԵՄ-ը պետք է լինի լիբերալ կայսրություն»:

Ստրատեգիական մտածելակերպ ունեցող քաղաքական առաջնորդները հասկանում են, որ ընդլայնվելուց բացի Եվրոպական Միությունը գնալու այլ տեղ չունի, հակառակ դեպքում՝ կընկնի լճացման մեջ եւ կհայտնվի համաշխարհային տնտեսության եւ աշխարհաքաղաքականության լուսանցքում: Ինչպես նշում է Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Յուրբեր Վեդրինը, «Եվրոպան աշխարհագրական է այնքան, որքան քաղաքական է: Այն չունի որեւէ սահման: Մենք պետք է վերադառնանք մեծ նախագծերի Եվրոպային, որը ներառում է ենթակառուցվածքներ, կրթական, զիտական, արդյունաբերական, սոցիալական, մշակութային, բնապահպանական, դիվանագիտական նախագծեր»:

Հետագա ընդլայնումը խոստանում է առելտրի եւ ներդրումների ավելի լայն հնարավորություններ եւ ավելի երիտասարդ բնակչության հեռանկարներ Միության համար, որի շնորհիվ հնարավոր կլինի հավասարակշռել նրա ծերացող բնակչությունը: Իսկ ներփակված եւ պաշտպանական դիրք բռնած Եվրոպան դժվար թե ունակ լինի մրցակցել, ասենք, Չինաստանի եւ Հնդկաստանի տնտեսությունների հետ: Վերջապես, ընդարձակված Միությունն ավելի շատ հնարավորություններ կունենա ազդելու իրեն հարակից տարածաշրջանների՝ Հս. Աֆրիկայի, Միջին Արեւելքի, Կենտրոնական Ասիայի եւ Ռուսաստանի վրա:

Ուստի, այս առումով, թե՛ Միության անդամների, թե՛ թեկնածու երկրների քաղաքական առաջնորդների առջեւ այսօր խնդիր է դրված բացատրել իրենց քաղաքացիներին հետագա ընդլայնման օգուտները: Եթե Եվրոպան իսկապես ցանկանում է հաստատվել «լիբերալ կայսրության» կամ համաշխարհային տերության դերում, որը հավակնում է աշխարհակարգի ձեւավորմանը մասնակցելուն, ապա նա կարիք է զգալու նոր աշխատուժի եւ նոր բանակների: Ակնառու փաստ է, որ այսօր Իրաքում, բացի բրիտանացիներից եւ իտալացիներից, Եվրամիությունից ներկա են միայն հենց նոր անդամ պետությունների ու անդամության թեկնածու երկրների զինվորները: Այս առումով, կարելի է ասել, որ երբ

Թուրքիան, Չարավային Կովկասը եւ Ուկրաինան դառնան ԵՄ անդամներ, Եվրոպան կդառնա իրապես գլոբալ խաղացող:

Ասվածը վկայում է, որ ԵՄ ընդլայնումը բնական աշխարհաքաղաքական գործընթաց է, որը չի կարող արհեստականորեն կանգնեցվել քաղաքական գործիչների կողմից կամ հանրաքվեների միջոցով: Ինչպես նշում է Ջեֆգենե Բժեզինսկին, «որոշակի պահին, երբ այս գործընթացը կհասնի իր սահմանին, այն կանգ կառնի ինքնըստինքյան: Սակայն այն չի կարող կանգնեցվել քաղաքական որոշմամբ»: Բժեզինսկու կարծիքով, բալկանյան երկրները, Ուկրաինան, Թուրքիան, Բելառուսը եւ հարավկովկասյան երկրներն անխուսափելիորեն միանալու են ԵՄ-ին:

Սակայն Եվրամիության մոդելի տարածումը Եվրոպայի միավորման միակ հնարավոր տարբերակը չէ: Նորվեգիան, Շվեյցարիան, Իսլանդիան ԵՄ անդամներ չեն, սակայն մտնում են Եվրոպական ինտեգրացիոն նախագծերի մեջ, ինչպես, օրինակ, Շենգենյան գոտին: Այս դեպքում Մեծ Եվրոպան կարող է որդեգրել «տարբերակված երկրաչափության» մոտեցումը, երբ որեւէ երկիր մասնակցում է Միության քաղաքականության միայն որոշակի ոլորտներին:

Այն Եվրոպան, որը տասը-քսան տարուց հետո է լինելու, դեռեւս չի հասնելու «Եվրոպացի ժողովուրդ» հասկացությանը: Այս գործընթացը նոր է սկիզբ առնում եւ սերունդներ է պահանջելու: Եվրոպայի ընդարձակումն էլ հենց նորացված Եվրոպական ինքնության ընդհանուր որոնումն է, որը հիմնվում է ընդհանուր սոցիալական, քաղաքական եւ մշակութային ժառանգության վրա:

Սակայն ապագայի Եվրոպան պետք է կարողանա փակել սեփական անցյալի հետ ունեցած հաշիվները: Օրինակ, Մեծ Բրիտանիան պետք է բացատրություն տա Երկրորդ աշխարհամարտի ընթացքում զերմանական քաղաքների դաժան ռմբակոծումների փաստերի առնչությամբ, Գերմանիան՝ դուրս գա Չոլոքոստի համար հավիտենական մեղքի բարդույթից, Ֆրանսիան՝ ազատվի սեփական մեծապետության պատրանքից, Լեհաստանը, Բալթյան երկրները եւ Ուկրաինան՝ Ռուսաստանի հանդեպ իրենց ունեցած բարդույթներից, Ռուսաստանը՝ իր կայսրական մտածելակերպից, Բալկանյան երկրները՝ իրար նկատմամբ թշնամանքից եւն: Այսինքն՝ Եվրոպական երկրները պետք է փակեն հաշիվները նաեւ իրենց հարեւանների հետ, որից հետո միայն հնարավոր կլինի խոսել փոխմատակության վրա հիմնված միասնական Եվրոպական ինքնագիտակցության մասին: Սակայն պետք է ասել, որ այս ապագան դեռ մշուշոտ է:

## **ՖՐԱՆՍԻԱ. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆՈՐ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Վահագն Ազլյան**

2006թ. հունվարի 19-ին Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակը Իլ-Լոնգ կղզում գտնվող ֆրանսիական միջուկային ուժերի կառավարման կենտրոնում հանդես եկավ հետեւյալ հայտարարությամբ. «Այն պետությունների ղեկավարները, որոնք կցանկանան օգտագործել կամ նույնիսկ քննարկել մեր դեմ ահաբեկչական միջոցների օգտագործման հնարավորությունը, պետք է իմանան, որ այդ դեպքում նրանք կստանան վճռական եւ համապատասխան արձագանք Ֆրանսիայի կողմից: Մենք կարող ենք արձագանքել ինչպես սովորական, այնպես էլ սպառազինության այլ տեսակների օգտագործմամբ»: Այնուհետեւ նախագահը ավելացրեց, որ ֆրանսիական միջուկային ուժերի ներկայիս համադրույթը «ճկուն» պատասխանի հնարավորություն է տալիս՝ ցանկացած սպառնալիքին արագ արձագանքելու համար:

Ըստ որոշ տեղեկությունների՝ ֆրանսիական ռազմածովային ուժերի կազմում են SNLE-NG դասի երեք սուզանավեր, իսկ չորրորդը ստորջրյա նավատորմի շարքերը կհամալրի 2008թ.՝ եզրափակելով 1996-ից սկսված միջուկային ստորջրյա նավատորմի վերազինման ծրագրի առաջին փուլը: SNLE-NG դասի սուզանավերը զինված են Aerospatiale M45/TN71 16 բալիստիկ հրթիռներով, որոնք ի զորու են հաղթահարել 11 հազ. կմ հեռավորություն: Այդ հրթիռներից յուրաքանչյուրը զինված է 150 կիլոտոննա հզորությամբ՝ 6 միջուկային մարտազլխիկներով: Ընդհանուր առմամբ՝ ֆրանսիական բանակի միջուկային ներուժը կազմում է 300-350 միջուկային մարտազլխիկ: 2006թ. հունվարին պաշտոնապես հայտարարվեց, որ ֆրանսիացի գիտնականներն արդեն մշակել են նոր տիպի մարտազլխիկներ, որոնք հաշվարկված են մթնոլորտի վերին շերտերում պայթելու համար՝ արդյունքում առաջացնելով էլեկտրամագնիսական իմպուլս, որն ի վիճակի է շարքից հանել հակառակորդի պաշտպանական-տեղեկատվական էլեկտրոնիկան: Պաշտոնական աղբյուրները հայտնում են նաեւ, որ նոտակա ապագայում ծրագրվում է կրճատել բալիստիկ հրթիռների մարտազլխիկների քանակը, ինչը զգալիորեն կմեծացնի դրանց հարվածային հեռավորության շառավիղը:

Միայն 2005թ. միջուկային ուժերի վերազինման եւ արդիականացման նպատակների համար Ֆրանսիան ծախսել է 3.5 մլրդ եվրո: Հայտնի է



նաեւ, որ այդ պետության ռազմածովային դոկտրինը ելնում է 6 ատոմային սուզանավերի առկայությունից, որոնցից երկուսը մշտապես պետք է գտնվեն երկրի համապատասխան ռազմածովային հանգրվանում, իսկ մնացյալ չորսը՝ հերթապահություն տանեն հեռավոր օվկիանոսյան ջրերում:

Դատելով ֆրանսիական աղբյուրների հաղորդումներից, եւ դա, ըստ էության, բխում է նաեւ Ժ.Շիրակի հայտարարությունից, Փարիզը հակված է գործնականացնելու արդեն հայտնի «Ճկուն միջուկային արծազանքման» ռազմավարական համադրույթը, որի հենքում ընկած է «ռազմավարական անորոշության» պայմաններում առավել պաշտպանվածության հասնելու կոնցեպտը: Պաշտոնապես նման կարգի «գլոբալ մարտավարական» կեցվածք որդեգրել են միայն ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը: Այժմ էլ Ֆրանսիան, արդեն դոկտրինալ քաղաքականության մակարդակում, համալրեց այս երկու միջուկային գերտերությունների շարքը՝ վճռական պատրաստականություն հայտնելով «ճշգրիտ» միջուկային հարվածների միջոցով դիմագրավելու ահաբեկչության սպառնալիքներին եւ «բոլոր նրանց, ով ձգտում է մտնել միջուկային ակունքի կազմի մեջ»: Այս վերջին հանգամանքը, անկասկած, ազդանշում է ֆրանսիացիների փաստացի ձգտումը՝ ՌԴ-ին եւ ԱՄՆ-ին համահավասար ընդլայնել միջուկային սպառնալիքների օգտագործման «քաղաքական հնարավորությունները»: Անշուշտ, ի տարբերություն ամերիկյան միջուկային ռազմավարության, ֆրանսիական միջուկային համադրույթում տեղի ունեցող փոխակերպումները նվազ հրապարակայնացված են: Սակայն Ֆրանսիայի միջուկային քաղաքականության բնագավառում ընթացող տեղաշարժերը, ըստ ամենայնի, կկանխորոշեն միջազգային եւ տարածաշրջանային զարգացումների որոշ տեսլականներ: Ընդսմին՝ կարելի է մի շարք նախնական եզրահանգումներ անել այս կապակցությամբ:

Առաջին. միջուկային նոր գերակայությունների ռազմավարական չափումն ուղղակիորեն կապված է հենց Ֆրանսիայի՝ իբրեւ միջուկային ինքնավար ուժային կենտրոնի կարգավիճակի պահպանման եւ «արդիականացման» հետ: Տասնամյակներ շարունակ Փարիզի սկզբունքային դիրքորոշումը՝ ցանկացած պարագայում անսասան պահել ֆրանսիական միջուկային ուժերի ինքնուրույնությունը, չի ենթարկվում որեւէ ձեւափոխման: Համադրելով միջուկային քաղաքականության հիմնատարները ՆԱՏՕ հրամանատարական-կազմակերպչական «նորմերի» հետ՝ Ֆրանսիան միշտ էլ իրեն է վերապահել միջուկային գենքի վերջնական օգտագործման արտոնությունը: Այդ դիրքորոշումն անփոփոխ մնաց նաեւ սառը պատերազմի ավարտից հետո: Օրինակ՝ չնայած միջազգային հանրության որոշ երկրների դեմարշներին, 1996թ. Մուրուրոա հրվանդանում

Ֆրանսիան իրականացրեց ստորգետնյա միջուկային փորձարկումների մի ամբողջ շարք: Ի հավելումն՝ ֆրանսիական ղեկավարությունը միջնաժամկետ հեռանկարում ծրագրում է ազգային նավատորմի կազմ ներմուծել նոր M-51 հրթիռը՝ համապատասխան նոր տիպի մարտազլխիկով:

Այնուամենայնիվ, այս համատեքստում պետք է նշել, որ ֆրանսիական միջուկային դոկտրինում այժմ ընթացող շրջադարձն ավելի քան հավանական է դարձնում երբեմնի տիրապետող «տոտալ» միջուկային պատերազմի համադրույթի փոփոխումը. տարիներ շարունակ միջուկային զենքի հավանական օգտագործումը դիտարկվում էր իբրև *ultima ratio*՝ վերջին, ծայրահեղ միջոց: Հասկանալի է՝ ոչ սովորական սպառազինության կարելորագույն նպատակներից մեկը՝ զսպման գործառույթը, տեսանելի ապագայում դուրս չի մղվի Ֆրանսիայի արտաքին քաղաքականության օրակարգից, սակայն փոփոխություններն անխուսափելի են թվում: Այդ մասին թափանցիկ ձևով ակնարկեց նաև Ժ.Շիրակը. «Նախագահին է պատկանում սպառնալիքի ծավալների եւ դրա հավանական հետեւանքների գնահատման իրավունքը»:

Երկրորդ, ուշագրավ է, որ Ժ.Շիրակի հայտարարությունը համընկավ Վաշինգտոնից վերջին շրջանում հաճախ հնչող հավաստիացումների եւ հորդորների հետ՝ ամրապնդել, ինչպես նաև ՆԱՏՕ հենքի վրա «արդիականացնել» տրանսատլանտյան կապերը ռազմական անվտանգության ոլորտում: Այս կապակցությամբ ուշադրության են արժանի տրանսատլանտյան համագործակցության հետեւյալ ասպեկտները: Փաստ է, որ եվրոպական պետությունների զինված ուժերի, ինչպես եւ անվտանգության բնագավառում համաեվրոպական (ESDP) նախաձեռնությունների եւ ԱՄՆ-ի միջեւ չափազանց էական որակական տարբերություն գոյություն ունի՝ ոչ հօգուտ եվրոպացիների: Ամերիկյան ռազմական եւ երկակի օգտագործման տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց իրական ներդրման հնարավորությունները մոտ ժամանակներս, հավանաբար, անհասանելի կլինեն որեւէ երկրի համար: Ընդ որում՝ այդ տեխնոլոգիաները, նոր զինատեսակներն ու հետախուզական արդի միջոցներն առայժմ պահպանվում են զուտ ամերիկյան բանակի պահուստում: Կարելի է ենթադրել, համեմայնդեպս տեսականորեն, որ նման «ճեղքվածքի» խորացումը ՆԱՏՕ դաշնակիցների միջեւ հեռանկարում կարող է հանգեցնել զգալի խոչընդոտների ՆԱՏՕ-ական զորքերի օպերատիվ համատեղելիության գործում: Գաղտնիք չէ, որ ամերիկյան ռազմավարներն արդեն այժմ գործնականորեն մշակում են նոր սերնդի պատերազմներ վարելու մեթոդաբանություն (ցանցակենտրոն կամ մատրիցայի մոդելի հիմքի վրա), որը ենթադրում է սկզբունքորեն այլ, «ոչ դասական» մոտեցումների կիրառում: Եթե վերոհիշյալ միտումն էլ ավելի խորանա, ապա հարցականի

տակ կարող է հայտնվել ռազմական ոլորտում եվրա-ամերիկյան համատեղելիությունը:

Բայց իրականում նման սցենարը քիչ հավանական է թվում. ամերիկյան ռազմավարական միտքը եվրոպական մայրցամաքը դիտարկել եւ այժմ էլ դիտարկում է իբրեւ հենքային տարածք իր գլոբալ ռազմավարության իրագործման ճանապարհին: Ակնհայտ է, որ աշխարհի տարբեր երկրամասերում լուրջ դժվարությունների բախված ԱՄՆ-ի համար բավականին արդիական է դառնում եվրոպական եւ ընդհանրապես միջազգային աջակցության ձեռքբերումը: Ուստի ակնկալել, որ եվրոպական դաշնակիցների պարագայում ամերիկյան կողմը հակված է խթանելու «անշրջելի գործընթացներ»՝ առնվազն միամտություն կլինի: Ամերիկյան վերջին հայտարարությունները՝ ուժեղացնել վերջերս սասանված ատլանտյան հարաբերությունները, ըստ ամենայնի, այլ կարգի հետեւությունների հիմք են տալիս. ԵՄ եւ եվրոպական առանձին երկրների կողմից «լոյալության» համապատասխան նշաններ ցուցաբերելուց հետո՝ ԱՄՆ-ը կարող է արագացնել ամերիկյան հողում արդեն «փորձաքննություն» անցած նոր հրամանատարական եւ ռազմական նշանակության այլ տեխնոլոգիական «նորարարությունների» ներդրումը ՆԱՏՕ շրջանակներում (C4I): Նման զարգացումները, բնականաբար, կարող են ոչ միայն հզորացնել առանց այն էլ էական ամերիկյան ներկայությունը եվրոպայում, այլեւ անշրջելի դարձնել եվրոպական ռազմական ինտեգրման «ստորադասումը» ՆԱՏՕ-ին: Այսպես՝ եվրոպացիների քիչ թե շատ հաջողված նախաձեռնությունը՝ եվրոպական արագ արձագանքման ուժերը, զգալի կախվածության մեջ են ՆԱՏՕ տեխնիկական բազայից:

Ակնհայտ է, որ եվրոպական եւ ատլանտյան համադրություն իր յուրահատուկ դերակատարությունը շեշտադրող եւ պաշտպանող Ֆրանսիայի համար նման բնույթի զարգացումներն անհանդուրժելի են: Այս համատեքստում հատկանշական է, որ Փարիզը մատնանշում է նաեւ միջուկային քաղաքականության վերանայված սխեմայի մեկ այլ դրդապատճառ՝ «ի հավելումն այլ խնդիրների՝ ապահովել դաշնակիցների եւ ռազմավարական կարելուրդության առաքումների անվտանգությունը», ինչն, իր հերթին, կարող է մեքենայաբար հանգեցնել միջուկային զենքի օգտագործման եզրագծի իջեցմանը: Մի կողմ թողնելով այդ հաստատման դիվանագիտական-քաղաքական միտվածությունը (թուլացնել եվրոպական դաշնակիցների ընդդիմությունը ֆրանսիական նոր նախաձեռնություններին)՝ ակնարկն, առաջին հերթին, ուղղված է Գերմանիայի հասցեին, որտեղ իշխանության եկած Ա.Մերկելի նոր վարչակազմը ակնհայտ տրանսատլանտյան «հակվածություն» է ցուցադրում:

Երրորդ. Ֆրանսիան բավականաչափ կոշտ ձեռով արտահայտեց իր վերաբերմունքը իրանական միջուկային ծրագրի վերաբերյալ. ֆրանսիական բանակի գլխավոր շտաբի պետ Ա.Բենտեժան բացահայտորեն մեղադրեց Իրանի իսլամական ռեժիմը միջուկային զենք ստեղծելու «վտանգավոր» փորձի մեջ: Ի պատասխան՝ Իրանի արտաքին գործերի նախարարությունը Փարիզի դիրքորոշման փոփոխմանն արձագանքեց՝ քննադատության ենթարկելով Ֆրանսիայի նախագահի վերոհիշյալ հայտարարությունը. «դրանով ժակ Շիրակը բարձրացրեց միջուկային տերությունների թաքնված նտադրությունների շղարշը՝ օգտագործել զանգվածային ոչնչացման զենքը որպես քաղաքական խաղերի գործիք»:

Իրանական հարցում ֆրանսիական դիրքորոշման որոշակի կոշտացումը (Փարիզը, այնուամենայնիվ, դեմ է ռազմական միջոցներով խնդրի կարգավորման տարբերակին) ըստ երեւույթին պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախելառաջ՝ իրանական կողմի հետ սկզբնական բանակցային ձեւաչափը՝ «Եվրաեռյակ – Իրան», բացահայտորեն հետին պլան մղվեց, երբ իրանական դուսյեն փոխանցվեց ԱԵՊ, մինչդեռ «Եվրաեռյակի» անդամներից մեկը՝ Մեծ Բրիտանիան, «բավականաչափ սահուն» կերպով կարող է միանալ խնդրի շուրջ վճռական երկխոսության մասնակից երկրների շարքին՝ ԱՄՆ-ին, Ռուսաստանին եւ Չինաստանին: Հասկանալի է, որ իրերի նման դասավորվածությունը, երբ մերձավորարեւելյան հանգուցային հիմնահարցերից մեկի կարգավորման գործում ԵՄ կարգավիճակն իջեցվում է զուտ գործիքայինի, չէր կարող բավարարել Փարիզի քաղաքական (այդ թվում նաեւ աշխարհաքաղաքական) հավակնությունները: Ստեղծված պայմաններում Ֆրանսիան գործունեության երկու իրարամերժ տարբերակներ ուներ. կամ, ինչպես դա եղավ իրաքյան պատերազմի նախօրեին՝ դիմել բացահայտ ընդդիմության ամերիկյան կարծի մոտեցումների նկատմամբ, կամ նախընտրել «գլոբալ անվտանգության պատասխանատվությունը կրող գերտերության առավել հավասարակշռված կեցվածք»: Ինչպես փաստում են վերջին զարգացումները, Ֆրանսիան առավել հակված է նախընտրելու երկրորդ տարբերակը:

Ցանկացած դեպքում ակնհայտ է, որ Ֆրանսիան ձգտում է վերակենդանացնել միջուկային զենքի երբեմնի գործառնությունները՝ զուգահեռաբար նախադրյալներ ստեղծելով իր արտաքին քաղաքական խնդիրների մի ամբողջ փաթեթի լուծման համար:

**ԳԼՈՒԲԱԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ «ԾԱՂՐԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ»  
Դավիթ Հովհաննիսյան**

17-րդ դարի վերջին Լյուդովիկոս 14-րդի Ֆրանսիան պատերազմ հայտարարեց Հոլանդիային՝ օգտագործելով այն առիթը, որ հոլանդացիները հատուկ մեղալ էին պատրաստել, որի երեսին պատկերված էր, թե ինչպես է Հոլանդիան, որը մարմնավորում էր Նավեի որդի Հեսուն, կանգնեցնում արեգակը (հիշեցնենք, որ Լյուդովիկոս 14-րդին ժամանակակիցները անվանում էին «Արեգակ արքա»):

Երբեմն պետությունները պատերազմել են նույնիսկ ֆուտբոլի պատճառով, սակայն հիմնականում այդ թվացող պատճառները միայն առիթ են եղել, որոնցով փորձ է կատարվել թաքցնել կոնֆլիկտի իրական էությունը:

Ներկայումս Մուհամադ մարգարեի ծաղրանկարների հրապարակումների պատճառով տեղի ունեցող ցույցերն ու բռնությունները, անշուշտ, հնարավոր է բացատրել հենց ծաղրանկարների հրապարակմամբ, սակայն այդ կերպ վարվելով՝ հնարավոր չէ ստանալ մի շարք հարցերի պարզաբանում:

Իրադարձությունները ծավալվեցին հետեւյալ կերպ. 2005թ. սեպտեմբերին մի դանիական ոչ շատ հայտնի թերթ հրապարակեց իսլամի հիմնադիր Մուհամադ մարգարեի կերպարի մոտիվներով կատարված 12 ծաղրանկար, հոկտեմբերին «ալ-Ֆաջր» (եգիպտական արտասանությամբ՝ «ալ-Ֆագր») թերթն արտատպեց այդ ծաղրանկարները, ինչը որեւէ հետեւանք այն ժամանակ չունեցավ, դեկտեմբերի 6-ին մի խումբ դանիացի մահմեդականներ ներկայացրին այդ ծաղրանկարներին նվիրված 47 էջանոց թղթապանակը Մեքքայում կայացած Իսլամական կոնֆերանս կազմակերպության գագաթաժողովի մասնակիցների ուշադրությանը: Նշենք, որ գագաթաժողովը նվիրված էր ահաբեկչության, ինչպես նաեւ սուլունի եւ շիա մուսուլմանների միջեւ ծայրահեղ լարվածության հասած հարաբերությունների հարցերին, սակայն քննարկումները հիմնականում ծավալվեցին ծաղրանկարների խնդրի շուրջ: ԻԿԿ-ը շատ խիստ կերպով դատապարտեց ծաղրանկարների հրապարակումը, սակայն դա էլ բավարար չէղավ, որպեսզի ամբողջ աշխարհում անմիջապես սկսվեն

բողոքի ցույցեր եւ հարձակումներ եվրոպական դեսպանատների վրա: Պահանջվեց եւս երկու ամիս, որպեսզի հավատացյալների կրթերը բավական չափով բորբոքվեն:

Հունվարի վերջից մի շարք մուսուլմանական եւ ոչ մուսուլմանական երկրներում սկսվեցին զանգվածային ցույցեր: Մուսուլմանական երկրներում՝ Ինդոնեզիայում, Իրանում, Աֆղանստանում, Պաղեստինում, Սիրիայում, Լիբանանում եւ այլուր, այդ ցույցերը զուգորդվեցին եվրոպական դեսպանատների վրա հարձակումներով: Բախումների ընթացքում եղան մարդկային զոհեր: Իսլամական աշխարհով տարածվեցին դանիական, նորվեգական եւ մի շարք այլ եվրոպական երկրների արտադրությունը բոյկոտելու կոչեր: Երկուստեք հետ կանչվեցին դեսպաններ, փակվեցին դեսպանատներ: Պետությունների ղեկավարների մակարդակով մեկը մյուսին հաջորդեցին շատ կոշտ հայտարարություններ, որոնցից ամենակտրուկը Իրանի նախագահ Ահմադինեժադի ելույթներն էին:

Լարվածության վերջին դրսեւորումները վերհիշել են տալիս Սալման Ռուշդիի «Սատանայական բանաստեղծություն» ստեղծագործության հրապարակմանը հետեւած այաթոլլա Խոմեյնիի որոշումը, համաձայն որի՝ գրողը մեղադրվեց անհավատության համար եւ դատապարտվեց մահվան: Ծաղրանկարների հեղինակին էլ դատապարտեցին տալիբները եւ 100 կգ ոսկի խոստացան մահապատիժն ի կատար ածող իսլամի մարտիկին: Բացի այդ, նրանք հայտարարեցին, որ Աֆղանստանում սպանված յուրաքանչյուր դանիացու, նորվեգացու կամ ֆրանսիացու համար կվճարեն 5 կգ ոսկի:

Միաժամանակ, մուսուլմանական աշխարհում հնչում են եւ այլ ձայներ: Մի հորդանանյան թերթ արտատպեց 12 հրապարակված ծաղրանկարներից երեքը՝ բացատրելով իր որոշումը հետեւյալ կերպ. հրապարակվածը ընդամենը ծաղրանկարներ են, որոնք կարող են վիրավորական լինել, սակայն դրանց հրապարակումն արժանի չէ այն աղմուկին, որը բարձրացել է այդ փաստի շուրջ: Իրական անհավատները նրանք են, ովքեր կազմակերպել են սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունը, ովքեր ներկայումս գրոհում են եվրոպական դեսպանությունները եւ այլն:

Ծաղրանկարների պատճառով Իսլամական աշխարհ – Եվրոպա հարաբերությունների ուրվագծվող հակամարտությունը կարելի է դիտարկել մի քանի հարթություններում:

Առաջին հարթությունը կապված է Ս.Հանտինգտոնի «Քաղաքակրթությունների բախման» տեսության հետ, որի տերմինաբանությունից էլ

անմիջապես սկսեցին օգտվել իրադարձությունները մեկնաբանող վերլուծաբանները՝ նշելով, որ տեղի է ունենում այն, ինչի մասին արդեն վաղուց խոսվում է եւ ինչը հստակորեն ակներեւ դարձավ հատկապես սեպտեմբերի 11-ից եւ Իրաք ամերիկյան բանակի ներխուժելուց հետո<sup>1</sup>:

Սակայն ծաղրանկարների հրապարակումը, որը ներկայումս ձեւակերպվում է իբրեւ երկու իրար հակադրվող քաղաքակրթությունների կարեւոր արժեքների սկզբունքային հակասություն (մամուլի ազատություն ընդդեմ կրոնական սրբությունների), շատ հարմար առիթ էր վերահաստատելու երկու տարբեր աշխարհների հակամարտության բուն էությունը: Ուստի իր էությանը աննշան մի առիթ օգտագործվեց նրա համար, որ հայտարարվի երկու քաղաքակրթությունների արժեքային բախման մասին՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ մուսուլմանների միայն չնչին մասն է մասնակցում բռնություններին, իսկ եվրոպացիների մեծամասնությունը շատ լավ ըմբռնում է հավատացյալների վիրավորվածության էականությունը:

Այս ամենի մասին վկայում է թե՛ այն փաստը, որ, օրինակ՝ Ինդոնեզիայի բազմամիլիոն մուսուլմանական բնակչության միայն 300 ծայրահեղականները մասնակցեցին դանիական դեսպանության վրա կատարված հարձակմանը եւ թե՛ այն հայտարարությունները, որոնցով հանդես եկան բազմաթիվ եվրոպական քաղաքական, հասարակական եւ կրոնական գործիչներ՝ խոսելով հավատացյալների կրոնական զգացմունքները վիրավորելու անընդունելիության մասին:

Բայց առիթը ստեղծվել է, եւ ահա համաշխարհային ՁԼՄ-ը հայտարարում են, որ իրար դեմ են դուրս եկել Եվրոպան (եւ շատ հատկանշական է, որ ո՛չ թե Արեւմուտքը, ինչպես դա սովորաբար ձեւակերպվում է, այլ հենց Եվրոպան)՝ իր ազատական ու ժողովրդավարական արժեքներով եւ իսլամական աշխարհը՝ իր կրոնական արժեհամակարգով:

1. Հիշեցնենք, որ «Քաղաքակրթությունների բախման» տեսությունը ակտուալացվեց 1990-ականներին՝ սառը պատերազմի ավարտից հետո, երբ ամերիկյան հասարակությունը որոշակի պրոբլեմների առջեւ կանգնեց իր հետագա զարգացման եւ ապագայի պատկերացումների որոշման հարցում: «Քաղաքակրթությունների բախման» տեսությունը դարձավ այն գաղափարախոսությունը, որը պետք է ապահովեր ամերիկյան հասարակության ներքին միասնությունը՝ իր արտաքին խնդիրների լուծման համար: 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները դրդեցին ԱՄՆ նախագահ Ջ.Բուշին հայտարարել նոր խաչակրաց արշավանքի մասին, որից հետո իրական բախումը, սակայն, ոչ թե քաղաքակրթությունների միջեւ էր, այլ Միացյալ Նահանգների եւ այն ուժերի, որոնք կարող են մրցակցության մեջ մտնել համաշխարհային կառավարման համակարգը հսկելու հարցում:

Ծաղրանկարների հրապարակման պատճառով ալեկոծված կրքերից եւ աստիճանաբար ավելի ու ավելի կազմակերպված բնույթ ստացող բախումներից ու ցույցերից փորձ են կատարում շահել տարբեր կողմեր:

Անհրաժեշտ է նշել, որ այն օրերին, երբ սկսվեցին բողոքի առաջին դրսևորումները, Իրանի միջուկային թղթապանակը ՄԱԿ Անվտանգության խորհուրդ ուղարկելու հարցը քննարկվեց ԱԵՄԳ Կառավարիչների խորհրդում, որը որոշում կայացրեց՝ քննարկման եզրակացություններն ուղարկել Անվտանգության խորհուրդ, ինչը նշանակում էր, որ ՄԱԿ-ը Իրանի միջուկային ծրագրի քննարկումը կարող է կազմակերպել մարտի ընթացքում:

Դա, իր հերթին, նշանակում էր, որ մեկ ամսից մի փոքր ավելի ժամանակ է մնում, որպեսզի կողմերը փորձեն դիվանագիտական միջոցներով հասնել խնդրահարույց հարցի լուծմանը:

Հասկանալի է, որ ներկայիս միջազգային քաղաքականության ամենաբարդ եւ վտանգավոր հիմնահարցը Միացյալ Նահանգների եւ Իրանի չկարգավորված հարաբերություններն են, ինչը պայմանավորված է ոչ միայն աշխարհաքաղաքական գործոնով կամ հակադարձ տնտեսական եւ քաղաքական շահերով, այլեւ սկզբունքային գաղափարական հակասություններով, որոնց հիմքում ընկած է Իրանի կողմից ԱՄՆ-ը՝ որպես միակ կառավարման բեւեռ չընդունելը:

Իրանը կողմնակից է բոլոր այն գլոբալիզացիոն ծրագրերին, որոնք ուղղված են ամերիկյանի դեմ կամ, առնվազն, մրցակցության մեջ են մտնում վերջինիս հետ: Անշուշտ, Իրանի Իսլամական Հանրապետության համար առաջնահերթ նշանակություն ունի իսլամական գլոբալիզացիոն ծրագիրը, որն առաջ մղելու համար անհրաժեշտ է նախ՝ ապահովել իսլամական աշխարհի միասնությունը, ինչը մինչ այժմ անհնար է եղել (եւ, մեր տեսակետից, այդպիսին է նաեւ այսօր): Մյուս կողմից՝ Իրանին անհրաժեշտ է ձեռք բերել իրական ռազմաքաղաքական հզորություն, ինչն, այդ երկրի տեսակետից, ենթադրում է ռազմամիջուկային տեխնոլոգիաներ ունենալը: Իրենց այս ցանկությունն իրանական ղեկավարները հիմնավորում են նրանով, որ Իսրայելը, որն ընկալվում է որպես իսլամական աշխարհի եւ, մասնավորապես, Իրանի առաջին թշնամի՝ խախտելով բոլոր միջազգային օրենքները եւ կանոնները, վաղուց արդեն ձեռք է բերել միջուկային զենք: Իրանին խրախուսում է նաեւ Հյուսիսային Կորեայի օրինակը, որն արդեն ունի միջուկային զենք եւ այդ պատճառով Միացյալ Նահանգներն ու մյուս մեծ տերությունները շատ զգուշավոր քաղաքականություն են վարում այդ երկրի հետ:

ԱՄՆ-ը ակնհայտորեն Իրանի հանդեպ բարդույթ ունի, ինչը բացա-



տրվում է ոչ միայն պատմական այն հիշողություններով, որոնք գալիս են իսլամական հեղափոխությանը հետևած իրադարձություններից. Իրանը էներգակիրների կարեւորագույն արտադրողներից է, ընդ որում՝ այդ էներգակիրները մատակարարվում են Միացյալ Նահանգների հիմնական մրցակիցներին՝ Չինաստանին եւ Եվրամիության երկրներին, ինչը լրացուցիչ պրոբլեմներ է ստեղծում Վաշինգտոնի համար:

Իրանը ներկայումս օգտագործում է «ծաղրանկարային պատերազմը»՝ իսլամական պետությունների կոնսոլիդացման, սուլեյմի ու շիա մուսուլմանների միջեւ հակասությունները մեղմելու համար: Բացի այդ, ներկայումս՝ Իրանի միջուկային ծրագրերի քննարկման նախօրեին, իսլամական աշխարհն ավելի հստակ է կողմնորոշվել իսլամական հանրապետության օգտին:

Իր հերթին, Միացյալ Նահանգները, հստակորեն գիտակցելով, որ Իրանի հետ չի կարելի վարվել նույն կերպ, ինչպես հնարավոր եղավ վարվել Իրաքի հետ (այս պետությունը շատ ավելի հզոր է եւ կուռ ու, բացի այդ, ցանկացած ամերիկյան հարվածին անմիջապես հետևելու է իրանական հակահարվածը, որն ուղղվելու է ԱՄՆ ռազմավարական դաշնակից Իսրայելի դեմ), ձգտում է ապահովել Իրանի միջուկային ծրագրերի վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամների աջակցությունը: Որպես առաջին քայլ՝ Իրանի դեմ պետք է կիրառել պատժամիջոցներ եւ երկիրը վերցնել տնտեսական ու ենթակառուցվածքային շրջափակման մեջ: Այդ ամենի համար, առաջին հերթին, պետք է հասնել ԵՄ աջակցությանը, ինչը մինչեւ վերջերս անհնար էր թվում, քանի որ Եվրոպական երկրների անմիջական շահերից է բխում Իրանի հետ բնականոն հարաբերություններ պահպանելը՝ վերջինիս նավթային եւ գազային պաշարներից օգտվելու համար, ինչը թույլ է տալիս քիչ թե շատ վստահորեն պլանավորել Եվրոպական տնտեսության զարգացման դինամիկան եւ չափից դուրս մեծ կախվածության մեջ չընկնել Ռուսաստանից: Այսպիսով՝ պարզ է դառնում ԱՄՆ շահը, որն այն կարող է քաղել «ծաղրանկարային պատերազմից»՝ խորացնելով Եվրոպայի եւ իսլամական աշխարհի միջեւ առկա առճակատումը:

Մի քանի այլ երկրներ (Թուրքիան, Ռուսաստանը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը եւ այլն) նույնպես փորձում են շահառուներ դառնալ այս իրավիճակում: Օրինակ՝ Թուրքիան առաջարկել է իր միջնորդությունը Եվրոպայի եւ իսլամական աշխարհի միջեւ՝ առաջ քաշելով մի քանի պայմաններ. ԵՄ եւ Թուրքիայի բանակցությունների սեղանից պետք է վերցվեն Կիպրոսի, փոքրամասնությունների եւ Ցեղասպանության հիմնահարցերը:

Մի խոսքով, վերջին շրջանի քաղաքական իրադարձությունները առիթ են տալիս հիշելու Բեռնարդ Շոուի արտահայտությունը. «Ով գլխարկը թռցրել է, նա էլ մորաքրոջը վերացրեց»:

Տուժողների անունները հայտնի են: Դրանք եվրոպական երկրներն են, այդ երկրներում բնակվող մուսուլմանական համայնքները, Միջին Արևելքի ժողովուրդները: Եթե իրադարձությունների զարգացումը չհաջողվի հսկողության տակ վերցնել, ապա, ի վերջո, կհայտնվի մի նոր՝ 21-րդ դարի Գավրիիլ Պրինցիպ (Ֆրանց Ֆերդինանդին սպանողը), որից հետո տուժող կլինեն բոլորը:

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՈՒՄ  
ԿԱՄ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՁԵՆՔԸ  
Սուրեն Մանուկյան**

*Ժամանակին Հին Հունաստանում իրենց ռազմական արվեստով հռչակավոր սպարտացիները չէին վարում երկարատև պատերազմներ հակառակորդների հետ: Դրա պատճառը հետևյալն էր. նրանք մտավախություն ունեին, որ հակառակորդը կարող է երկարատև բախումների ժամանակ ընդօրինակել սպարտական ռազմարվեստը և հետագայում այդ վարպետությունն ուղղել հենց Սպարտայի դեմ:*

Այս իմաստությունն այսօր երեւի կհիշեն նրանք, ովքեր ժամանակին իրենց գերիշխանությունը Մերձավոր Արեւելքում հաստատելու համար իբրև գաղափարախոսական զենք կիրառեցին ժողովրդավարությունը: Մրցակից քաղաքակրթությունները ձգտում են տարածել սեփական արժեքային և մշակութային նորմերն ամբողջ աշխարհով մեկ, և այս պարագայում գաղափարախոսական զենքը ոչ պակաս կարելու է դառնում, քան տնտեսական կամ ռազմական առավելությունը: Սակայն ժողովրդավարության ընտրությունը՝ իբրև էքսպանսիայի տեսական հիմնավորում, այսօր ոչ միայն ապացուցում է իր խոցելիությունը, այլև կարող է նույնիսկ դառնալ մի վտանգավոր զենք, որը կուղղվի այն առաջինը կիրառողի դեմ:

Հունվարի 25-ին Պաղեստինյան ինքնավարության խորհրդարանական ընտրություններում Իսլամական դիմադրության շարժման՝ «Համաս»-ի հաղթանակը վերստին արդիականացրեց Արեւելքի ավանդական հասարակություններում ժողովրդավարության նորմերի կամ գոնե դրանց ամենակարելու բաղադրիչներից մեկի՝ ազատ ընտրությունների միջոցով իշխանություն ձեւավորելու վերաբերյալ դիսկուրսը: Խնդիրը ոչ թե դրա արդյունավետության մեջ է, քանի որ Արեւելքի մի շարք երկրներ արդեն իսկ ապացուցել են ընտրություններ կազմակերպելու անհերքելի ունակություն (Իրան, Լիբանան, վերջերս նաև Իրաք). հանգուցային հարցը ազատ ընտրությունների անցկացման նպատակահարմարությունն ու դրանց հետեւանքներն են: Արդյոք կարիք կա՞ ժողովրդավարություն տարածել Մերձավոր Արեւելքում, այն դեպքում, երբ այն իր հետ բերում է հենց արեւմտյան ազդեցության նահանջ, և հետեւանքները հաճախ շատ ավելի բացասական են լինում, քան

ժողովրդավարության կամ ազատ կամաարտահայտման պակասի եւ միահեծան, սակայն, կայուն եւ կանխատեսելի իշխանությունների գոյության պայմաններում:

Ժողովրդավարությունը հրամցնելով իբրեւ գերագույն արժեք՝ Արեւմուտքը ստեղծում է նաեւ իր դեմ ժողովրդավարական մեթոդներով պայքարելու հնարավորություն:

Պաղեստինում «Համաս»-ի տարած համոզիչ հաղթանակը իշխանության բերեց ուժերի, որոնք ոչ միայն չեն վայելում Արեւմուտքի հովանավորությունը, այլեւ բացահայտ անընդունելի են: Այսպես, ընտրվածների թվում են պաշտոնապես ահաբեկիչներ հայտարարված 40 հոգի, եւ դա ԱՄՆ-ի կողմից կյանքի կոչված եւս մեկ գաղափարական հիմնավորման՝ հակաահաբեկչական պայքարի պարագայում:

Բացի այդ, ընտրությունների հաջորդ օրն արդեն «Համաս»-ը գրավել է խորհրդարանի շենքը եւ նրա վրա փակցրել իսլամի կանաչ դրոշը, իսկ նրա առաջնորդները հայտարարել են, որ հետեւողական են լինելու Պաղեստինյան ինքնավարության իսլամականացման եւ հրեական պետության դեմ շարունակական պայքարի հարցում:

«Համաս»-ի հաղթանակը երկրաշարժ էր միջազգային քաղաքականությունում, սակայն սա առաջին դեպքը չէ, երբ արեւմտյան քաղաքակրթության դեմ օգտագործվում են իր իսկ հնարքները:

Իրականում իսլամական քաղաքակրթությունը բավականին վաղուց եւ շատ մեծ հաջողությամբ է օգտագործում ազատական կամ ժողովրդավարական օրենքները եւ հռետորությունը՝ սեփական շահերը բավարարելու համար: Մի փոքր օրինակ. գերմանական Աախեն քաղաքում բավականին հաջող եւ երկար գործում էր «ալ-Աքսա» բարեգործական կազմակերպությունը, որը գումարներ էր հավաքում արաբա-խորայելական հակամարտության հետեւանքով տուժած անձանց համար: Իրականում, ըստ հետախուզական տվյալների՝ գումարների մի մասը բաժին էր հասնում հենց «Համաս»-ին: Ի դեպ, «ալ-Աքսան»՝ իբրեւ բարեգործական կազմակերպություն, օրենքին համապատասխան, ստանում էր նաեւ բավականին մեծ նվիրատվություն գերմանական իշխանություններից: Փաստորեն, գերմանական հարկատուները, առանց դրա մասին կասկածելու անգամ, ֆինանսավորում էին «Համաս»-ի գործունեությունը:

Սա մի փոքր դրվագ է միայն, սակայն կան ոլորտներ, որտեղ արեւմտյան զենքը մահմեդականների կողմից օգտագործվում է բավականին արդյունավետ եւ հետեւողականորեն:

Օրինակ, իր ծագման արշալույսին իսլամական առաջնորդների կողմից անխնա քննադատության ենթարկված Ինտերնետն այսօր

արմատական իսլամական կազմակերպությունների համար դարձել է պայքարի արդյունավետ միջոց. սեփական, բարձր տեխնիկական մակարդակով պատրաստված եւ ժամանակակից ձեւավորում ունեցող կայքերի շնորհիվ տարածվում է գաղափարախոսություն, եւ երիտասարդների շրջանում հավաքագրվում են նոր կողմնակիցներ:

Վիրտուալ պատերազմին պատրաստ լինելու մասին է վկայում նաեւ վերջերս մահմեդական հակերների հարձակումը մոտ 2000 եվրոպական կայքերի վրա, որտեղ նրանք, եվրոպական մամուլում Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների հայտնվելուն ի պատասխան, տեղադրեցին հակաեվրոպական արտահայտություններ:

Մեկ այլ կարեւոր ոլորտ է արեւմտյան հեռուստաընկերությունների օրինակով ստեղծված եւ հիմնականում եվրոպական լրագրողական դպրոցն անցած մասնագետներով համալրված «ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը, որը ոչ միայն շատ կարճ ժամանակում կարողացավ վերացնել արեւմտյան մեդիայի մենաշնորհը լուրերի ձեւավորման եւ տարածման ոլորտում, այլեւ սեփական առաքելությունը քարոզելու եւ գովերգելու հարմար միջոց դարձավ շատ հակաարեւմտյան ուժերի համար: Այն փաստորեն մերձավորարեւելյան իրադարձություններն իսլամական հասարակության դիտակետից ներկայացնելու եւ արեւելյան հայացքով այդ լուրերը եւ դրանց մեկնաբանությունները ներկայացնելու հնարավորություն ստեղծեց:

Կարեւոր ցուցիչ էր արեւմտյան ժողովրդավարության մեկ այլ տարրի՝ մարդու իրավունքների առաջնայնության սկզբունքի կիրառման փորձը հայտնի «հիջաբ»-ային շարժման ժամանակ. իսլամական գլխաշորեր կրելու իրենց իրավունքը պաշտպանելու համար մահմեդական կանայք Ֆրանսիայում դուրս եկան հրապարակային պայքարի, ինչը, մեղմ ասած, չի խրախուսվում իսլամական կրոնում: Թեեւ նրանք հաջողության չհասան, սակայն սա այն դեպքերից է, երբ նշանակալի նմանքն է եւ ոչ թե արդյունքը:

Սակայն ընտրություններում «Յամաս»-ի հաղթանակն ավելի լուրջ խաղաքարտ է եւ ավելի նշանակալի երեւույթ: Այն կարող է առանց բռնությունների կիրառման քաղաքական հաջողությունների հասնելու եւ ժողովրդավարության դեմ ժողովրդավարական գործիքներով պայքարելու օրինակ ծառայել: Եթե «Յամաս»-ը որոշակիորեն փոխի իր գործելաոճը եւ ճանաչում ստանա ԱՄՆ-ի ու ԵՄ-ի կողմից եւ դրանով լեգիտիմացնի իր գոյությունը, դա կլինի հեղափոխություն, քանի որ ցույց կտա հաղթական ճանապարհը նման շատ այլ իսլամական ծայրահեղական կազմակերպություններին, որոնք սպասում են իրենց ժամին Սիրիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Թունիսում եւ այլուր:

«Համաս»-ի իշխանության գալը կարող է ստիպել նաև Վաշինգտոնին վերանայել երրորդ աշխարհի երկրների ժողովրդավարացման քաղաքականությունը: Ասվածը վերաբերում է նաև ժողովրդավարացման գաղափարով միավորված Մեծ Մերձավոր Արեւելքի ստեղծման նախագծին, որը հետեւողականորեն տարվում է ԱՄՆ-ի կողմից: Պաղեստինյան փորձը ցույց է տալիս, որ ազատ ընտրությունների դեպքում իշխանության կարող են գալ ոչ թե այն ուժերը, որոնց վրա հիմնականում հենվում է Վաշինգտոնը, այլ նրա հակառակորդները:

Պաղեստինյան դեպքը, փաստորեն, խաղաղ իսլամական հեղափոխություն էր, որը քաղաքական առաջնայնությունների համակարգը ազգայինից փոխեց կրոնականի: Նույնը կարող է լինել նաև այլ պետություններում, որտեղ հոգնելով կոռումպացված, հասարակությունների դեմ ծառայած հիմնախնդիրների լուծմանն անընդունակ, երկարատեւ միահեծան իշխանությունից՝ բնակչությունն ազատ ընտրությունների կազմակերպման դեպքում կընտրի միակ այլընտրանքը՝ կրոնական ընդդիմությունը, որն ավտորիտար համակարգում գաղափարական այլընտրանքի բացակայության պայմաններում, բարձրացնելով ավանդական հասարակություններում բացարձակ արժեք հանդիսացող Իսլամի գաղափարը, առանց մեծ դժվարությունների կհաղթի ընտրություններում:

Այսպես արդեն մեկ անգամ տեղի էր ունեցել՝ 1992թ. Ալժիրում: Այն ժամանակ կառավարությունը չեղյալ հայտարարեց ընտրությունների արդյունքները, եւ Արեւմուտքը սատարեց նրան: Այսօր այդ քայլը կրկնել՝ կնշանակի բացահայտ կիրառել երկակի ստանդարտների մոտեցումը, ինչն, իր հերթին, կբերի Արեւմուտքի կողմից հետագայում առաջ քաշված ցանկացած գաղափարի վարկաբեկման:

**ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ  
ԵՎ «ՀԱՄԱՍ»-Ի ՀԱՂԹԱՆԱԿԸ  
Արաքս Փաշայան**

2006թ. հունվարի 25-ին Պաղեստինի ազգային ինքնավարությունում (ՊԱԻ)՝ Յորդանան գետի արեւմտյան ափին եւ Ղազայի շրջանում, վերջին 12 տարիների ընթացքում անցկացված երկրորդ խորհրդարանական ընտրությունները միջազգային շրջանակներում մեծ հետաքրքրություն առաջացրին: Պաղեստինում իշխանության եկավ մի խմբավորում, որը 1987-ից ի վեր ներգրավված է պաղեստինյան դիմադրության շարժման մեջ, պատասխանատու է բազմաթիվ մարտական գործողությունների համար, իր գերխնդիրը համարում է Իսրայել պետության ոչնչացումը եւ ազատագրված Պաղեստինի տարածքում իսլամական պետության ստեղծումը:

Օրենսդիր մարմնի 132 տեղերի համար պայքարում էին 728 թեկնածուներ: Ընտրություններին մասնակցեց քվեարկության իրավունք ունեցողների 77 տոկոսը: Արեւելյան Երուսաղեմում իսրայելական իշխանությունների կողմից ընտրելու իրավունք ստացան հիսուն հազար արաբներ: Չայների ճնշող մեծամասնություն ստացավ «Համաս» իսլամական արմատական շարժումը՝ 74 տեղ, իսկ իշխող «Ֆաթիհ» ստացավ 45 տեղ: Երրորդ եւ չորրորդ տեղերը զբաղեցրին «Պաղեստինի ազատագրման ազգային ճակատ» եւ «Այլընտրանք» դաշինքները: «Իսլամական ջիհադը» բոյկոտել էր ընտրությունները:

Օրենսդիր մարմնի շուրջ երեսուն նորընտիր պատգամավորներ՝ որպես ահաբեկիչներ, ներկայումս փնտրվում են իսրայելական հատուկ ծառայությունների կողմից: Կան պատգամավորներ, ովքեր իսրայելական բանտերում են գտնվում: Նրանցից է Մրվան Բարդուտին՝ «Թանգիմ» խմբավորման առաջնորդը, որը գլխավորում էր «Ֆաթիհ» ցուցակը:

Արդեն հունվարի 26-ին, նախքան պաշտոնական արդյունքների հրապարակումը, վարչապետ Ահմադ Քուրեյխն եւ նրա կաբինետը հրաժարական տվեցին: Չնայած սկզբնական շրջանում տարածված լուրերին, թե Մահմուդ Աբասը հեռանալու է ՊԱԻ նախագահի պաշտոնից, նա շարունակելու է իր լիազորությունները: «Համասի» ղեկավարներն արդեն հայտարարել են, որ պատրաստ են պաղեստինյան քաղաքական այլ ուժերի, մասնավորապես՝ «Ֆաթիհ» հետ բանակցություններ սկսել ապագա քաղաքական դաշինքի վերաբերյալ:

«Ֆաթիխ» պարտությունը պատահական չէր, որը Յասիր Արաֆաթի մահվանից հետո խարիզմատիկ առաջնորդ չունեցավ, իսկ հակասությունը կուսակցության հին եւ նոր սերունդների միջեւ աստիճանաբար խորացավ: Պաղեստինցի վերլուծաբանների կարծիքով՝ շատերը քվեարկել են ոչ թե հոգուտ «Համասի» գաղափարախոսության, այլ ցանկացել են պատժել «Ֆաթիխ»՝ կոռումպացվածության, Պաղեստինում սոցիալական արդարության բացակայության եւ պաղեստինցի ժողովրդի արդար իրավունքները պաշտպանել չկարողանալու համար: «Ֆաթիխ» կողմնակիցները պարտության համար մեղադրեցին կուսակցության ղեկավարությանը՝ կազմակերպելով բողոքի բազմաթիվ ցույցեր:

Այս համատեքստում «Համասը» զգալի ժողովրդականություն է վայելում Պաղեստինում՝ նաեւ որպես իսլամական սոցիալական շարժում: Նա հիմնել է մի շարք բարեգործական հիմնադրամներ, հիվանդանոցներ, մզկիթներ եւ ուսումնական կենտրոններ, հետամուտ եղել հասարակության մեջ սոցիալական արդարության հաստատմանը՝ ըստ շարիաթի:

Զնայած օրենսդիր մարմնի ընտրություններն անցան ազատ եւ արդար, «Համասի» հաղթանակը լուրջ մտահոգություն առաջացրեց Իսրայելում, ԱՄՆ-ում եւ մի շարք արեւմտյան երկրներում: Նրանց կողմից ահաբեկչական կազմակերպություն դիտարկվող «Համասի» հաղթանակը նշանակում է, թե կարող է հարցականի տակ դրվել պաղեստինա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը:

«Համասի» հաղթանակը մտահոգիչ է նաեւ արաբական մի շարք երկրների համար, որոնք զգուշանում են տեղական իսլամական արմատական ուժերի ակտիվացումից:

Ընտրության արդյունքների հրապարակումից անմիջապես հետո Իսրայելի վարչապետի պաշտոնակատար Էհուդ Օլմերտը կառավարության արտահերթ նիստի ժամանակ հայտարարեց, թե «Համասը» բանակցությունների գործընկեր չէ եւ որ իրենք այսուհետ գործ են ունենալու ահաբեկիչների հետ: Օլմերտին մեղադրում են այն բանի համար, որ թույլ է տվել ահաբեկչական կազմակերպությանը գրանցվել, իսկ Արեւելյան Երուսաղեմի արաբներին՝ մասնակցել քվեարկությանը: Պաշտոնական թեւ Ավիվի կարծիքով՝ «Համասի» հետ հնարավոր է բանակցել միայն այն դեպքում, եթե նա հրաժարվի ահաբեկչությունից, ճանաչի Իսրայել պետության գոյության իրավունքը, ընդունի նախկինում կողմերի միջեւ կնքված պայմանագրերը: Իսրայելում որոշ ծայրահեղական շրջանակների կողմից քննադատության թիրախ են դարձել «Կադիմա» կուսակցությունը եւ նրա առաջնորդ Արիել Շարոնը,



որը 2005թ. օգոստոսին դուրս բերեց զորքերը Ղազախի շրջանից եւ Զյուսիսային Սամարիայից, ինչը, իբրեւ թե, ահաբեկիչների մեջ ամրագրեց այն գաղափարը, որ ուժի կիրառմամբ կարելի է հաջողության հասնել:

«Համասի» հաղթանակից հետո շարժման քաղբյուրոյի նախագահ Խալիդ Մաշաալի եւ շարժման այլ ղեկավարների հայտարարությունները հետեւում են մեկը մյուսին: «Համասը» ձգտում է միջազգային հանրությանը ներկայանալ ընդունելի կեցվածքով: Նա իր նվիրվածությունն է հայտնել ժողովրդավարության սկզբունքներին՝ ազատությանը, արդարությանը եւ հավասարությանը: Շարժումը, սակայն, չի փոխի իր քաղաքականությունն Իսրայելի նկատմամբ: Դիմադրությունն օրինական է այնքան ժամանակ, քանի կա իսրայելական օկուպացիան: Խ.Մաշաալի կարծիքով՝ իրենք չեն հրաժարվում բանակցել ԱՄՆ-ի եւ Եվրոպացիների հետ, սակայն չեն հանդուրժի, եթե նրանք փորձեն պարտադրել իրենց տեսակետները: «Ազ ադ-Դին ալ-Կասսամը»՝ շարժման ռազմական թեւը, չի արձակվելու, այլ ընդլայնվելու է՝ վերաճելով պաղեստինյան դիմադրության բանակի, որի հիմնական գործառնությունը լինելու է պաղեստինցի ժողովրդի պաշտպանությունն ու Իսրայելի օկուպացիայի դեմ պայքարը: «Եվրոպացիներն ու ամերիկացիները մեզ ասում են՝ զենքը կամ խորհրդարանը. մենք պատասխանում ենք՝ ե՛լ զենքը, ե՛լ խորհրդարանը», - ասում են «Համասի» ղեկավարները:

Հունվարի 30-ին Լոնդոնում մերձավորարեւելյան «քառյակը» (ԱՄՆ, Ռուսաստան, ԵՄ, ՄԱԿ) նորընտիր պաղեստինյան խորհրդարանին կոչ արեց օրենքի գերակայության, հանդուրժողականության, բարենորոգումների եւ ֆինանսների հուսալի կառավարման քաղաքական կուրս վերցնել: «Քառյակի» կարծիքով՝ պաղեստինյան ապագա կառավարության բոլոր անդամները պետք է ձեռնպահ մնան բռնության սկզբունքից, ճանաչեն Իսրայելը, ինչպես նաեւ նախկինում կողմերի միջեւ կնքված համաձայնագրերը: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի բանակցել «Համասի» հետ: Հակառակ դեպքում, Եվրամիության երկրները եւ ԱՄՆ-ը սպառնում են, որ կդադարեցնեն ինքնավարության ֆինանսավորումը, ինչից նա ամբողջովին կախված է (Պաղեստինի ինքնավարության բյուջեն կազմում է 1.6 միլիարդ. դրամից 1 միլիարդը ստացվում է դոնոր երկրներից, առաջին հերթին՝ ԵՄ-ից եւ ԱՄՆ-ից): Ի պատասխան՝ «Համասի» ղեկավարները նշել են, որ արտերկրից եկող գումարները ուղղորդվելու են բյուջետային աշխատավարձերի վճարմանը եւ ենթակառուցվածքների գործունեությանը: (Նշենք, որ ինքնավարությունն ունի 135-137 հազար բյուջետային աշխատողներ): «Համասը» հայտարարել է, որ իրականացնելու է բարենորոգումներ վարչական-տնտեսական, իրավա-

դատական ոլորտներում, ուժային կառույցներում, պայքարելու է կոռուպցիայի, աղքատության եւ գործազրկության դեմ:

Ներկայումս սառեցված են Համաշխարհային բանկի, ինչպես նաեւ Իսրայելի փոխանցումները ՊԱԻ բանկային հաշվեհամարներին: Սակայն ֆինանսական սպառնալիքները եւ պաղեստինյան վարչակազմի հնարավոր անկումը դեռեւս չեն ստիպել «Համասին»՝ փոխզիջումների գնալ: Նա դիմել է իսլամական աշխարհի օգնությանը՝ ֆինանսական ծեղքվածքը փակելու համար: Կատարը եւ Սաուդյան Արաբիան խոստացել են պաղեստինյան իշխանությունների հաշվին փոխանցել 33 մլն դոլար: Շարժմանը խոստացել է աջակցել նաեւ Դամասկոսը, որը դիմել է արաբական երկրներին՝ կոչ անելով փոխհատուցել Արեւմուտքի կողմից դադարեցված ֆինանսական օգնությունը: Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի կարծիքով՝ «Համասի» հաղթանակը կնպաստի պաղեստինցիների միասնությանը: Նշենք, որ Սիրիան համարվում է «Համասին» սատարող երկիր, իսկ 1997թ. սեպտեմբերին Ամմանում «Մոսադի» գործակալների հետ հայտնի միջադեպից հետո Խալիդ Մաշաալը մինչեւ վերջերս ապրում էր Սիրիայում:

«Համասը» ստացել է նաեւ Իրանի աջակցությունը, որը խոստացել է իր վրա վերցնել ինքնավարության ինը ամսվա ծախսերը: Իրանը «Համասի» հաղթանակը դիտարկում է որպես լրացուցիչ զործոն՝ Մերձավոր Արեւելքում իր դիրքերն ամրապնդելու համար: Տարածաշրջանում իսլամական արմատական ուժերի հաղթանակը եւ դրանց աստիճանական քաղաքականացումը Թեհրանի համար դառնում են մերձավորարեւելյան քաղաքականության նոր հանգրվան՝ դիմագրավելու իսլամական աշխարհը բռնի «ժողովրդավարացնելու» եւ Մեծ Մերձավոր Արեւելք ստեղծելու ամերիկյան քաղաքականությանը: Թեհրանում «Համասի» հաղթանակը նույնիսկ կապում են Իրանի իսլամական հեղափոխության նվաճումների հետ եւ վստահեցնում, որ պաղեստինցի ժողովուրդը պատրաստ է ռազմական ճանապարհով դիմագրավել սիոնիստական օկուպացիոն վարչակարգին:

Ստեղծված իրավիճակի վատթարացումից մտահոգված են նաեւ պաղեստինցիները: Վերջերս անցկացված հարցախույզի տվյալների համաձայն՝ ՊԱԻ բնակչության երեք քառորդը կցանկանար, որպեսզի «Համասը» հրաժարվեր Իսրայելին ոչնչացնելու գաղափարից: Հարցվածների 84 տոկոսը հույս ունի, որ շուտափույթ կերպով Իսրայելի հետ հնարավոր կլինի խաղաղության համաձայնագիր կնքել: «Համասը» պատրաստ է իրականացնել իր ընտրազանգվածի պահանջները՝ Իսրայելի հետ տասը տարվա զինադադար կնքելով, պայմանով, որ նա հեռանա 1967 թվականին գրաված պաղեստինյան բոլոր տարածքներից:

«Համասը» պահանջում է ապագա պաղեստինյան պետության մայրաքաղաքը դարձնել Երուսաղեմը, վերադարձնել փախստականներին, իսրայելական բանտերից ազատել պաղեստինցի ձերբակալվածներին, ինչպես նաև հնարավորություն ստեղծել «Համասի» անդամներին՝ Ղազախից տեղափոխվել Արեւմտյան ափ՝ Ռամալլահ, ինքնավարության նստավայրը, ինչն Իսրայելն արգելել է:

Բնականաբար, «Համասի» հաղթանակը կանդրադառնա նաև 2006թ. մարտին Իսրայելում խորհրդարանական ընտրությունների վրա: Չի բացառվում, որ իշխանության գան առավել արմատական ուժեր՝ ի դեմ «Լիկուդի»:

Իսկ մինչ այդ «Համասը» պատրաստվում է ստեղծել «տեխնոկրատների կառավարություն», եթե դա նրան հաջողվի, ինչը կարող է մեղմել միջազգային արձագանքը շարժման նկատմամբ: Ներկայումս շրջանառվում են վարչապետի մի քանի թեկնածուների անուններ:

«Համասի» հաղթանակը, ըստ էության, կարող է արմատապես փոխել իրադրությունը ոչ միայն Պաղեստինում եւ Իսրայելում, այլև ողջ տարածաշրջանում: Չիրաժարվելով իր կոշտ արմատական սկզբունքներից, «Համասը» կարող է պաղեստինցիներին զցել բարդ իրադրության մեջ. Պաղեստինը կարող է ընդգրկվել «չարի առանցքում», որի դեպքում հնարավոր է Աֆղանստանում Տալիբանի եւ Իրաքում Սադամ Հուսեյնի վարչակարգի դեմ ԱՄՆ հայտնի գործողությունների տարբերակը:

Չի բացառվում նաև, որ «Համասը», իշխող կուսակցություն եւ քաղաքական ուժ դառնալուց հետո, վերանայի իր գաղափարախոսությունն ու մարտավարությունը, ինչպես դա եղավ «Ֆաթիհ» պարագայում: Սակայն, ինչպես կարծում է եգիպտական հետախուզության ղեկավար Օմար Սուլեյմանին, անգամ եթե «Համասը» որոշի փոխել իր քաղաքականությունը, դրա համար կպահանջվի ամենաքիչը կես տարի:

Ինչեւէ, «Համասի» հաղթանակը կայացած իրողություն է, եւ ինչպես նշել է Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսան, միջազգային հանրությունը ստիպված է գոյակցել Պաղեստինի նոր իշխանության հետ:

## ԻՐԱՆ – ՎՐԱՍՏԱՆ ԳԱԶԱՄՈՒՂԻ ՇՈՒՐՋ

### Ե. Մալցեւ

2006թ. հունվարի վերջին սկսված իրանական գազի մատակարարումները Վրաստան, ռուս-վրացական հայտնի «գազային վեճերի» առկայությամբ, Թեհրանի էներգետիկ ռազմավարության խորքային կերպափոխման ազդանշան հանդիսացան:

Չնայած Ռուսաստանի եւ Իրանի՝ որպես երկու խոշորագույն գազային հսկաների (պաշարներով՝ համապատասխանաբար առաջին ու երկրորդ տեղերը աշխարհում) օբյեկտիվ մրցակցությանը, Թեհրանի եւ Մոսկվայի միջեւ բարձր մակարդակի «էներգետիկ» երկխոսությունը կողմերին միշտ բերել է փոխշահավետ արդյունքներ. նրանք գլոբալ էներգետիկայի առանցքային հարցերում հանգել են ակտիվ համագործակցության հաստատման անհրաժեշտությանը, համաձայնեցրել իրենց դիրքորոշումները միջազգային եւ տարածաշրջանային գազի շուկաներում, հանդես եկել սուր մրցակցությունից հրաժարման, էներգետիկ համագործակցության փոխշահավետ բազայի կառուցման օգտին:

Այնուամենայնիվ, աշխարհատնտեսական ու աշխարհագրական գործոնների ուժի մեջ մտնելու դեպքում գազային հոսքերի ռուսական եւ իրանական երթուղիները Մոսկվային ու Թեհրանին անխուսափելիորեն կհանգեցնեն մրցակցության: Գազի սպառման երկու խոշորագույն շուկաները՝ Եվրոպան ու Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը (ԱԽՏ), երկու երկրների համար էլ առաջնային նշանակություն ունեն: ԱԽՏ-ում դեռ չափազանց վաղ է խոսել Իրանի եւ Ռուսաստանի հնարավոր մրցակցության մասին. մշակման ընթացքում գտնվող Իրան-Պակիստան – Յնդկաստան գազամուղի նախագիծը, որը կարող է դառնալ ԱԽՏ-ում Թեհրանի բազմահամալիր գազային ռազմավարության իրագործման առաջին փուլը, կարող է իրականացվել 2010թ. ոչ շուտ, իսկ Ռուսաստանը նոր միայն ձեռնամուխ է եղել արեւելասասիական ուղղությամբ իր գազային հոսքերի բաշխման (դիվերսիֆիկացման) հնարավորությունների ուսումնասիրմանը: Եվրոպայում Ռուսաստանի եւ Իրանի մրցակցային դիմակայությանը պետք է սպասել ավելի շուտ: Փաստորեն, այսօր այդ մրցակցության առաջին ծիլերը կարող ենք տեսնել Թուրքիայում, որտեղ մատակարարվում է ինչպես իրանական (Իրան – Թուրքիա գազամուղ), այնպես էլ ռուսական («Երկնագույն հոսք» գազամուղ) գազը: Բացի այդ, Թեհրանն արդեն իսկ Բուլղարիայի

ու Լեհաստանի հետ վարում է աշխույժ «Էներգետիկ» երկխոսություն՝ այդ պետությունների վրայով Արեւմտյան Եվրոպայի երկրներ իրանական գազի տարանցումը կազմակերպելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Անդրկովկասի ու Կենտրոնական Ասիայի (ներառյալ Կասպյան) տարածաշրջաններին, ապա Ռուսաստանի եւ Իրանի էներգետիկ հետաքրքրություններն այստեղ արդեն այսօր են հատվում: Եվ եթե մինչեւ այժմ, շնորհիվ վստահելի քաղաքական երկխոսության բարձր մակարդակի, կողմերին հաջողվում էր գտնել էներգետիկ խնդիրների փոխզիջումային լուծումներ (օրինակ՝ Տաջիկստանում Սանգոտուղիի ՅԷԿ-ի առաջին եւ երկրորդ բլոկների շինարարության առաջնահերթությունների սահմանափակում, Ռուսաստան – Իրան – Ադրբեջան ձեւաչափով եռակողմ էներգետիկ համագործակցության հաստատում, «Իրան-Յայաստան» գազամուղի նախագծին ռուսական կողմի միացում), ապա Վրաստան իրանական գազի մատակարարման հետ կապված ներկայիս կացությունն առնվազն տարօրինակ է երեւում:

Տվյալ իրավիճակում Թեհրանում առաջին պլան են մղել վերնախավի տնտեսական շահերը, թեւ այդ քայլում, անշուշտ, կա ավելի խոր աշխարհաքաղաքական ենթատեքստ: Ընդառաջելով վրացական ղեկավարությանը (որին, ի դեպ, Թեհրանը բազմիցս խարանել է եւ համարել ՆԱՏՕ-ամեն)՝ Իրանի քաղաքական ղեկավարությունը հաշվարկել է ոչ միայն ամրապնդել իր տնտեսական դիրքերն Անդրկովկասում, այլեւ այդ հարեւան ռազմավարական տարածաշրջանում ընդլայնել քաղաքական ազդեցությունը: Օգտվելով ռուսական գազի մատակարարման խաթարումների հետեւանքով Անդրկովկասի էներգետիկ դաշտում բացված «ճեղքվածքից»՝ իրանցիներն անմիջապես շտապեցին զբաղեցնել այդ «խորշը»՝ Վրաստանին երաշխավորելով «երկնագույն վառելիքի» անխափան մատակարարում:

Չատկանշական է, որ Թեհրանի կողմից իրանա-վրացական էներգետիկ համագործակցության հաստատման հնարավորությունների նախնական ստուգումը սկսվել է դեռ մի քանի տարի առաջ, երբ երկու այլ՝ «Իրան – Յայաստան» եւ «Իրան – Նախիջեւան» գազամուղների կառուցմանը զուգահեռ, առանց ավելորդ ցուցադրության, Թեհրանի ու Թբիլիսիի միջեւ անցկացվեցին փորձագիտական բանակցություններ: Այն ժամանակ Իրան-Վրաստան գազամուղի նախագիծը ներկայացվում էր բացառապես տեսական մակարդակով՝ որպես մի ինչ-որ երկարաժամկետ ծրագիր, որին հազիվ թե վիճակված լինի իրականանալու:

Իրանա-վրացական գազամուղի նախագիծն առավել իրական ուրվագծեր ստացավ 2004-2005թթ.: 2004թ. ամռանը Թեհրան Վրաստանի էներգետիկայի նախարարի կատարած այցի արդյունքում կողմերն

այդ երկիր Ադրբեջանի վրայով իրանական գազի տարանցիկ առաքումների շուրջ ձեռք բերեցին սկզբունքային պայմանավորվածություն: Սակայն նախագիծն այն ժամանակ էլ բախվեց մի շարք ֆինանսական ու տեխնիկական բարդությունների. վրացիներին հարկավոր էր իրենց տարածքում՝ մինչև Ադրբեջանի սահմանը վերականգնել խողովակաշարը: Ներգրավելով ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ՝ նրանք այդ նպատակով օգտագործեցին Իրանի տրամադրած 2,5 մլն դոլար դրամաշնորհը (համապատասխան համաձայնագիրը ստորագրվել է 2004թ. Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլու Իրան կատարած այցի ընթացքում): Փորձագետների գնահատմամբ, վերանորոգման ենթակա Վրաստան – Ադրբեջան գազամուղի թողունակությունը կարող է տարեկան կազմել 800 մլն խմ, սակայն հեռանկարում այն հնարավոր է հասցնել մինչև 3-4 մլրդ-ի:

Ռուսական գազի մատակարարման խաթարումների հետեւանքով առաջացած էներգետիկ ճգնաժամի պայմաններում Վրաստանը համաձայնագիր կնքեց Իրանի հետ: Իրան – Վրաստան գազամուղի վիրտուալ նախագիծը հանկարծ վերածվեց իրականի: Ընդ որում՝ այն ինքնաբերաբար տեղափոխվեց քաղաքական հարթություն. հունվարի 24-ին Իրանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Մոթաքիի նախաձեռնությամբ կայացավ նրա հեռախոսազրույցը Վրաստանի ԱԳ նախարար Բեժուաշվիլու հետ, որի ընթացքում Իրանի ԱԳ ղեկավարը «անհանգստություն հայտնեց Վրաստանում էներգետիկների մատակարարման հետ կապված իրավիճակի կապակցությամբ եւ առաջարկեց աջակցություն՝ Վրաստան իրանական գազի մատակարարման խնդրի լուծման գործում»:

Ինչպես պարզվեց, չնայած տեխնիկական բարդությունների առկայությանը, արդեն այսօր գազամուղի թողունակությունը կարող է կազմել օրական մինչև 2 մլն խմ (տարեկան շուրջ 730 մլն խմ): Վրացի մասնագետների պնդմամբ, հեռանկարում այս ծավալը հնարավոր է հասցնել օրական մինչև 3 մլն խմ-ի: Ուշադրություն է գրավում նաեւ մեկ այլ հետաքրքիր մանրամասնություն. իրանական գազի գինը 1000 խմ համար կազմելու է մոտ 120 ԱՄՆ դոլար, ինչը 10 դոլարով բարձր է ռուսական գազի գնից: Հանուն արդարության հարկ է նաեւ նշել, որ իրանական գազի մատակարարումներն ամբողջովին չեն փակելու ռուսական ռազմավարական արտահանումը Վրաստան եւ նախկինի պես պահպանելու են Թբիլիսիի՝ Ռուսաստանից գազի ստացման պահանջումները: Սակայն ռուսական մատակարարներին նեղել նրանք կարող են: Մասնագետների գնահատմամբ, իրանական գազը, Ադրբեջանի մատակարարումներով հանդերձ, հնարավորություն կտա

մինչև 60%-ով ապահովել վրացական կողմի էներգետիկ պահանջները:

Այսպիսով, Վրաստան բնական գազի մատակարարման իր նախաձեռնությունից եկող հիմնական դիվիդենտները թեհրանը կստանա քաղաքական ոլորտում: Առաջվա պես պարզ չէ, թե ինչպես պետք է գնահատել թեհրանի ներկայիս քայլը. կան որպես կանխամտածված քաղաքական ակցիա, կան որպես երկրի «էներգետիկ վերնախավի» իներցիոն հակազդեցություն, որը չի հաշվարկում տվյալ նախաձեռնության բոլոր քաղաքական հեռանկարները: Սակայն եթե հաշվի առնենք, որ Իրանում ցանկացած ռազմավարական որոշում, հատկապես գլոբալ էներգետիկ քաղաքականության հարցերով, ընդունվում է բացառապես երկրի բարձրագույն ղեկավարության թույլտվությամբ, ապա Վրաստան գազի մատակարարման մասին որոշումը չի կարելի պատահական համարել: Ավելի շուտ՝ ընդհակառակը. այն հարկավոր է դիտել որպես անդրկովկասյան տարածաշրջանում իրանական էներգետիկ դիվանագիտության աշխուժացման քայլերից մեկը: Փաստացիորեն իրանական գազն արդեն մուտք է գործում տարածաշրջանի բոլոր երեք պետությունները՝ հանդիսանալով այլընտրանք ռուսական գազին: Ուստի Անդրկովկաս իրանական գազի մատակարարումների դեռևս փոքր ծավալները չպետք է մոլորեցնեն. հեռանկարում թեհրանը լիովին կարող է այս ուղին օգտագործել սեփական գազը եվրոպական շուկաներ արտահանելու համար: Ու եթե հաշվի առնենք Վրաստանի տարանցիկության հնարավորությունները՝ Սեւ ծովով ուղիղ ելք դեպի Եվրոպա, ապա հասկանալի կլինի թբիլիսիի հետ սերտ էներգետիկ համագործակցություն հաստատելու իրանական կողմի շահագրգռվածությունը:

Վերջին դրույթը հիմնավորվում է հետեւյալ հանգամանքով: Թբիլիսին ակտիվորեն լոբբինգ է անում Իրան-Յայաստան գազամուղը դեպի Եվրոպա ելքով Վրաստանին կցելու գաղափարը: Եվ թեպետ այսօր սույն գաղափարի հնարավորությունները մեծ չեն գնահատվում (այն պահանջում է լրացուցիչ խողովակաշարի կառուցում, քանզի ներկայիս կառուցվող իրանա-հայկական գազամուղը նախատեսված է ոչ մեծ ծավալների համար՝ ընդունակ բավարարելու բացառապես Յայաստանի ներքին պահանջմունքները), սակայն այն հաշվարկներից ամբողջությամբ դեն նետել հարկավոր չէ: Ինչպես ցույց է տալիս իրանա-վրացական գազամուղի փորձը, երբ առկա է կողմերի քաղաքական կամքը, ցանկացած ֆինանսական կամ տեխնիկական խնդիր լիովին հաղթահարելի է:

Ամփոփելով Անդրկովկասի տարածաշրջանում թեհրանի «գազային» քաղաքականության նախնական արդյունքները՝ պետք է նշել նրա

որոշակի ձեռքբերումները: Իրանին գրեթե հաջողվեց տարածաշրջանի գազի շուկաներում եթե ոչ ռազմավարական, ապա բավականին ամուր դիրքեր գրավել: Մահմուդ Ահմադինեժադի ու նրա նախորդ Մուհամադ Խաթամիի տնտեսական կուրսի պրագմատիզմն ապահովեց Իրանի կողմից ճկուն եւ արդյունավետ տարածաշրջանային տնտեսական ռազմավարության անցկացումը: Բացի այդ, Անդրկովկասում իրանական էներգետիկ դիվանագիտության հաջողություններին նկատելիորեն օժանդակեց ձեւավորված կացությունը, որն Անդրկովկասի պետությունների էներգետիկ համակարգերի անկայունության պայմաններում Իրանին նպաստավոր հնարավորություն ընձեռեց: Այլ է, թե Թեհրանը որքանով արդյունավետորեն կօգտվի այդ հնարավորությունից՝ ի գիտություն ընդունելով իր միջուկային ծրագրի շուրջ բոլորքվող իրավիճակը եւ իրանական «դոսյեն» ՄԱԿ Անվտանգության խորհրդին հանձնելու ահազանացող սպառնալիքը:

**[www.iimes.ru](http://www.iimes.ru)**

(Մերձավոր Արեւելքի ինստիտուտ)



**ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԽՆԴՐԻ  
ՈՒԺԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
Վլադիմիր Իվանով**

Փետրվարի 5-ին ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը լրագրողներին հայտարարեց, թե ինքը լիովին հավանական է համարում Իրանի դեմ ռազմական գործողության անցկացումը, որպեսզի վերջ դրվի նրա միջուկային ծրագրին եւ բացառվի Թեհրանի մոտ ատոմային ռումբի հայտնվելը: Պենտագոնի ղեկավարը սուր քննադատության ենթարկեց Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի արտահայտությունները, որը Թեհրանում նախորդ տարվա հոկտեմբերին ելույթ ունենալով «Աշխարհն առանց սիոնիզմի» կոնֆերանսում՝ հայտարարեց հետեւյալը. «Անտարակույս է, որ սիոնիստական վարչակարգի դեմ պաղեստինյան ժողովրդի պայքարի նոր ալիքը կբարձրացնի իսլամի բոլոր հետեւորդների բարոյական ոգին եւ շուտով իսլամական աշխարհից ընդմիջտ կջնջի այդ ամոթի խարանը՝ Իսրայելը»: Ռամսֆելդը նշեց. «Ցանկացած կառավարություն, որը պնդում է, թե Իսրայելն իրավունք չունի գոյատեւելու, հայտարարում է ապագայում իր հնարավոր գործողությունների մասին»: Ամերիկյան ռազմական գերատեսչության ղեկավարը նաեւ հասկացրեց, որ Իրանի միջուկային պատրաստություններն անմիջական սպառնալիք են հանդիսանում Իսրայելի համար:

\* \* \*

Ռամսֆելդի կարծիքի հետ լիովին համաձայնեց Սենատում հանրապետական մեծամասնության ղեկավար Բիլ Ֆրիսթը: Կանգաս Սիթիում անցկացված Միսսուրի նահանգի հանրապետականների կոնֆերանսում սենատորը ՋԼՄ ներկայացուցիչներին հայտարարեց, թե անհրաժեշտության դեպքում ԱՄՆ Կոնգրեսը կպաշտպանի Իրանի դեմ ռազմական ուժի կիրառումը: «Մենք չենք կարող թույլ տալ Իրանին՝ դառնալ մի երկիր, որը տիրապետում է միջուկային զենքի: Մեզ հարկավոր է դիմել դիվանագիտական պատժամիջոցների: Եթե այն չգործի, ապա՝ տնտեսական պատժամիջոցների: Եթե դա էլ չօգնի՝ անհրաժեշտ է դիտարկել ռազմական ուժի օգտագործման հնարավորությունը», – ասաց Ֆրիսթը: Այն հարցին, թե կբավարարի, արդյոք, Կոնգրեսի անդամներին քաղաքական կամք՝ հավանություն տալու Իրանին հարված

հասցնելուն, Սենատի մեծամասնության ղեկավարը պատասխանեց. «Անշուշտ, այո»:

Ռազմական գործողության անցկացման օգտին են հանդես գալիս նաեւ ամերիկյան մյուս օրենսդիրները: Այսպես, Քոնեքթիկուտ նահանգից դեմոկրատ սենատոր Ջո Լիբերմանը, նշելով, որ ԱՄՆ Ձինված ուժերը հանդիսանում են աշխարհում ամենահզորներից մեկը, հայտարարեց, թե, չնայած Իրաքում, Աֆղանստանում եւ աշխարհի այլ տարածաշրջաններում ռազմական գործողությունների անցկացմանը, Միացյալ Նահանգներն ունի բոլոր անհրաժեշտ հնարավորությունները՝ Իրանի միջուկային օբյեկտներին կանխարգելիչ հարված հասցնելու համար:

Լիբերմանի հետ համակարծիք է նաեւ նրա գործընկերը՝ Արիզոնա նահանգից սենատոր Ջոն Մակքեյնը, որը համարվում է Հանրապետական կուսակցությունում ազդեցիկ դեմք եւ նախագահի պաշտոնի ենթադրյալ թեկնածու: «Չի կարելի շեշտել նման ռազմական գործողության արդյունավետությունը, բայց այն պետք է լինի այդ խնդրի լուծման բացարձակապես վերջին տարբերակը: Դրանից առավել վատ կլինի թույլատրել Իրանին՝ ձեռք բերել միջուկային զենք: Նրա ռազմական զինանոցում արդեն իսկ կան հրթիռներ, որոնք կարող են լիցքավորվել մարտազլխիկներով», – ընդգծել է Մակքեյնը: Նա նաեւ նշել է, որ հասկանում է տվյալ հարցով թե՛ Ավիվի անհանգստությունը, հատկապես եթե հաշվի առնվի Իրանի նախագահի հայտարարությունը Իսրայելը երկրի երեսից ջնջելու մտադրության մասին:

Այնուամենայնիվ, ռազմական ուժի գործադրման համար վերջին խոսքը պատկանում է ամերիկյան զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարին՝ ԱՄՆ նախագահին: Իսկ Ջորջ Բուշը Իրանի վերաբերյալ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության բանաձեւի ընդունումից հետո ասաց, որ «միջազգային ընկերակցությունը Իրանին թույլ չի տա իր տնօրինության տակ ունենալ միջուկային զենք»:

Ընդ որում՝ ի տարբերություն 2003թ. իրաքյան կամպանիայի նախօրեի, Վաշինգտոնի մտահոգությունը՝ պայմանավորված Իրանի միջուկային ամբիցիաներով, կիսում են արեւմտաեվրոպական առաջնորդները: Այսպես, ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելը Իրանի միջուկային ծրագրի հետ կապված վտանգը համեմատել է նացիստական Գերմանիայից եկած սպառնալիքի հետ: Նա հարկ համարեց հիշեցնել, որ Գերմանիայում, ֆաշիստական վարչակարգի հաստատման սկզբնական շրջանում, միջազգային ընկերակցությունն ակնհայտորեն թերագնահատեց նրանից ելնող վտանգի աստիճանը: «Հետադարձ հայացք գցելով Գերմանիայի պատմությանը՝ անցած դարի 30-ականների սկզբին, երբ

նացիոնալ-սոցիալիստական շարժումը նոր էր միայն սկսվում, Գերմանիայի սահմաններից դուրս շատերն ասում էին, թե դրանք սոսկ բառեր են, չարժեն անհանգստանալ», – նշել է Մերկելը:

\* \* \*

2004թ. վերջին ամերիկյան «Atlantic Monthly» հայտնի հանդեսն անցկացրեց իմպրովիզացված «ռազմական խաղ»՝ երեք ժամ տևողությամբ, որը իմիտացում էր Իրանին հարվածելու ուղղությամբ Միացյալ Նահանգների նախապատրաստությունների տարբեր փուլերը: «Խաղի» սցենարը մշակել էր ԱՄՆ ռազմաօդային ուժերի (ՌՕՈՒ) նախկին գնդապետ Սեմ Չարդիները, որը երկար տարիներ ռազմական մոդելավորում էր դասավանդում Ազգային ռազմական քոլեջում եւ Ամերիկայի մի շարք ուրիշ համանման ուսումնական հաստատություններում: Այս պաշտոնաթող սպան ժամանակին անմիջական մասնակցություն էր ունեցել Իրաքում պատերազմի մոդելավորմանը:

Բացի Չարդիներից, որը սցենարով հանդես էր գալիս նախագահի վարչակազմի ղեկավարի դերում, «ռազմական խաղին» մասնակցում էին նաեւ մի քանի գիտնականներ, որոնք հանդիսանում էին Մերձավոր Արեւելքի գծով փորձագետներ եւ տարբեր ժամանակներում իրանական խնդրի զանազան կողմերին առնչվող տվյալների անմիջական պատրաստողներ:

Ըստ մտահղացման, ԱՄՆ հատուկ նշանակության ուժերի տեղակայման եւ Իրանին օդից հարվածելու համար առաջարկվում էր օգտագործել Ադրբեջանի տարածքը: Բացի այդ, նախատեսվում էր գրոհների կազմակերպում Իրաքում, Աֆղանստանում, ինչպես նաեւ Մեծ Մերձավոր Արեւելքի այլ երկրների տարածքներում տեղակայված ԱՄՆ ռազմակայաններից:

Մտահղացված գործողության իրականացման համար ծրագրվել էր գործի դնել նաեւ Վրաստանի ու Ադրբեջանի ռազմական օդակայանները: Սակայն ԱՄՆ ՌՕՈՒ բազավորման այս կետերը նախապես հարկավոր էր լուրջ վերակառուցել, որպեսզի նրանց վրա կարողանան վայրէջք կատարել իրանյան գործողությանը մասնակցող ամերիկյան ռազմական ու տրանսպորտային ինքնաթիռները: Այդ կապակցությամբ առաջարկվում էր դրանց արդիականացման աշխատանքների կատարման համար հատկացնել 700 մլն դոլար:

Չարկ է նշել, որ Պենտագոնի որոշ փորձագետներ բավական բարձր են գնահատել հանդեսի անցկացրած «ռազմական խաղի» արդյունքները:

\* \* \*

Նախորդ տարվա դեկտեմբերի կեսերին Իսրայելի պաշտպանության նախարարությունում բաց քննարկվեց Իրանին «կանխարգելիչ հարված» հասցնելու հնարավորությունը: Համաձայն Իսրայելի զինվորականների հայտարարությունների, նման մտադրությունները պայմանավորված են նրանով, որ արդեն 2006թ. մարտին Թեհրանն ընդունակ է սկսել արդյունաբերական ուրանի հարստացումը, իսկ 2-3 տարի հետո նրա մոտ կհայտնվի միջուկային զենք:

Այսպես, 2005թ. դեկտեմբերի 11-ին հրեական պետության ռազմական գերատեսչության ներկայացուցիչ Ամոս Դիլադը հայտարարեց, թե ինքը «չի բացառում Իրանին հարվածելու հնարավորությունը, եթե երկիրը շարունակի միջուկային զենքի մշակումը»:

Շատ փորձագետներ ուշադրություն են դարձնում Իսրայելի կողմից Իրանի դեմ սահմանափակ ռազմական գործողության անցկացման մեծ հավանականության վրա: Նրա նպատակը, անտարակույս, լինելու է ոչ թե երկրի օկուպացումը, այլ սոսկ իրանական միջուկային օբյեկտների ոչնչացումը: Ընդ որում՝ մասնագետները կարծում են, որ, ամենայն հավանականությամբ, նման «կանխարգելիչ գործողությունը» կիրականացվի միայն իսրայելական զորքերի կողմից. ընդ որում՝ Թել Ավիվն այդ քայլին կդիմի առանց ՄԱԿ որեւէ թույլտվության: Տվյալ գործողությունը, որի ծրագրման իրական լինելու մասին 2005թ. վերջին եվրոպական թերթերը շատ են գրել, հազիվ թե ԱՄՆ-ի ու Եվրամիության կողմից լրջորեն դատապարտվի:

**«Независимое военное обозрение»**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տերտերյան ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՊԱՅԹԵՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ	1
Սարգիս Հարությունյան ԿԱՍՊՅԱՆ ԽԱՉՍԵՐՈՒԿ	5
Արտակ Շաքարյան ԿԻՊՐՈՍԻ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱ–ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	13
Սուրեն Սարյան ԵՎՐՈՊԱ. ԱՊԱԳԱՅԻ ՍՑԵՆԱՐՆԵՐ	18
Վահագն Ազլյան ՅՐԱՆՍԻԱ. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆՈՐ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24
Դավիթ Հովհաննիսյան ԳԼՈՐԱԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԾԱՂՐԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ»	29
Սուրեն Մանուկյան ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՈՒՄ ԿԱՄ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԶԵՆՔԸ	35
Արաքս Փաշայան ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ ԵՎ «ՀԱՄԱՍ»-Ի ՀԱՂԹԱՆԱԿԸ	39
Ե. Մալցեւ ԻՐԱՆ–ՎՐԱՍՏԱՆ ԳԱԶԱՍՈՒՂԻ ՇՈՒՐՋ	44
Վլադիմիր Իվանով ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԽՆԴՐԻ ՈՒԺԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ	49

*Շապիկի վրա պատկերված է  
Կոռիկոսի բերդը (Ծովային Կիլիկիա)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: